

634.11

450

ԹՐԵՆԻ

ԳՈՐԾՆԵՑԿԵՐՆ ԶԵՄՆԵՐԿ

Նրա մշակութեան և շահագործման:



Պատկերազարդ ամսագիր
Կազմեց Ն. Սիմեօնեան
Թիֆլիս
1912 թ.

Պատկերազարդ ամսագիր
Կազմեց Ն. Սիմեօնեան

Թիֆլիս
1912 թ.

31 JUL 2013

19.959

24 SEP 2010
634.11
U-50

Ամենաշնտիր քոժոժի սերմ
ԱԼՔՍԱՆ ՎԱՐՊԵՏԵԱՆ ԵԿ. ՖԻՐՄԱՅԻ
Կ-ՊՈՂԻՍ



Հնկերութեան Թուսառանի և Պարսկաստանի դըլ-
խաւոր ներկայացուցիչն է

ՏԻԳՐԱՆ ԽԵԶԵԿԻՅ

Թիգլիս

Մեծաքանակ զնողներն զիմերու են ուղղակի գըլ-
խաւոր ներկայացուցչն՝ զիջումով զնելու համար:

Սերմերն ստացւում են նոյնմերի 30-ից: Աւելի
պակսեցրած զներով տանել ունկացողները պիտի բա-
րեհաճեն վաղօրօք ապայաննելի պայմանագրել Մայիս-
Յունիս ամիսներից: Պայմանների մասին դիմել հետեւալ
հասցեով:—

Տիֆլիս, Տագրան Խաչիանց


Անձամբ տեսակցել ցանկացողները կարող են դի-
մել Սիոնի եկեղեցու մօտ Բարխուդարեանի տանը, ուր
դաշնուում է և գրանենեակը:

630
118-ՄԻ

Ա Բ Ե Ն Ի

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱԴՐԱ ՁԵՐՆԱՐԿ

ԵՐԵ ՄԱՅԻՆԻԹԵԵՆ ԵՒ ՇԵՀԵՐԱՐԺՈՒՆ



32 Ակարներով

Կաղմաց Ն. ՍԻՄԵՈՆԵԱՆՑ



Թիգլիս
Տագրան Վ.ՊՕԽԱՆ Մուղեսկի սեր. № 8

1912



Существуетъ

съ 1872 года.

1-ое Кавказское
ДЕПО СЪМЯНЪ
Ларшѣ

Михайловскій проспектъ, № 10

ПРЕДЛАГАЕТЪ НОВАГО УРОЖАЯ

СЪМЕНА

огородныя, цветочныя, древесныя и друг. лучшаго качества

Л А Р Ш Е

ЦИФРЫ ВЕЛИКИЕ ЧИСЛА

пр. пожелавши въ 1872 году: Умѣніе тѣснѣкъ рѣшнѣи
рѣшнѣи, архитекторы, инженеры, строители, архитек-
торы, архитекторы, строители, архитекторы, строители
и т. д.

Нижнѣи рѣшнѣи, архитекторы, строители, архитек-

торы, строители, архитекторы, строители, архитек-

торы, строители, архитекторы, строители, архитек-

Ч И С Л А

թթենին բումումէ գրեթէ ամեն կողմերում. Անդրկովկասում
շատ տեղեր կան ուր նա ինքնարոյս էլ է աճում. կան քաղաքներ
(Երևան, Հին Նախիջևան, Օրգուրաթ, Գողթանի գիւղերը) և
ուրիշ շատ տեղեր, ուր թթենին, մանաւանդ անկորիզը, մինչև
այժմս ամեն մի բակի անհրաժեշտ ծառն է. իսկ երբ մեր երկրում
դեռ օղիի տուրք—արցիզ չկար, շատ ու շատ ընտանիք ապրում
էր մի տասնեակ թթենիներից ստացած արագի արդիւնքով:
Շերամապահութիւնը կազմելով մեր երկրի մի որոշ շրջանի արդիւ-
նարերութիւններից մէկը, ընական է, որ թթենու մշակութիւնն էլ
նրա հետ պէտք է անրաժեան կազ ունենայ:

Անդրկովկասին նման է սուսական թուրքեստանը և Անդր-
կասպեան Ծուսաց կալուածքները, իսկ Ծուսաստանի հարաւային
բարեխան կլիմայի շերտերում թթենին վերջներումս սկսել է
կամաց կամաց նորից յարգելի տեղ բռնել և հաւանական է, որ
մօտիկ ապագայում այնտեղ շերամապահութիւնն էլ զարդանայ:

Զնայելով թթենու մեզ տուած բազմակողմանի օգուտներին,
մենք նրան շատ բիչ ենք ճանաչում, նրա վրայ կարևոր ինսամբը
չենք տանում, հիւանդութիւնները չենք հասկանում, հետևապէս
և նրան բժշկելու համար անփոյթ ենք գտնուում, որից ծառը լաւ
պտուլ չէ տալիս, տերեները լինում են սակաւ, վտիտ, թոյլ ու
չեզոտ կամ ժանդապատ են, պտղատու կամ տերեւատու ծառից
գորշագոյն հիւթ է հոսում, 3—10 և աւելի տարեկան ծառերի

տերեները գեղնում են ու ծառը ցամաքում — չորանում է. այս
ամեն երևոյթներին անփոյթ ենք դանում. կարծում ենք ինչ որ
լինելու և պէտք է լինի, սրա ճակատագիրն էլ այդ է եղել. և այն:

Շատերը հարցերով զիմում են մասնագէտներին և գիւղա-
տնտեսական հաստատութիւններին՝ թթենիների հիւանդութիւն-
ների և բերքի (տերեկի և պտղի) սակաւութեան մասին հարցերով.
այդ երևոյթը ուրախալի է նրանով, որ ցոյց է տալիս, թէ մե-
զնում սկսել են հետաքրքրուել իրենց պահող-կերակրող և ամենա-
պիտանացու ծառի վիճակով:

Թթենու կեանքի և մշակութեան ինչպէս տեսական, նոյնպէս
և գործնական մանրամասնութիւնները մենք իվաղուց հետէ ուսում-
նասիրելով, կազմեցինք այս Գործնական Զեւնարկը, ուր հետա-
քրքիր աչքը կարող է այդ ծառի մասին ամենաէական և կարևոր
տեղեկութիւնները քաղել:

Առանձին բաժանմունքով դրւած են այս ծառի հիւանդու-
թիւնների պատճառները և նրանց բժշկելու միջոցները:

Դրած ենք մի շարք կարեռնկարներ:

Գրեոյկիս նիւթը և նկարների մի մասը վերցրած ենք ինչպէս
Ն. Շաւրովի „Շելковица, ее разведеніе и пользованіе ею,”
գրքից, Іоганнъ Боле-ի „Руководство къ разведенію тутового
дерева” հրատարակութիւնից, նոյնպէս և օգտւել ենք ուրիշ
մասնագէտ հեղինակների արած փորձերից և գրաւոր աշխատա-
սիրութիւններից:

Մենք խոյս ենք տուել խոր գիտական նկարագրութիւնների և
քիմիական պարզաբանութիւնների շատերից. այլ վերցրել ենք
նրանցից այն մասերը, որոնք կարող են հասկանելի և մատչելի
լինել ամենին:

Աւելորդ չհամարեցինք զրքոյկի վերջում մի առանձին
բաժին յատկացնել Տեղեկատու վերնագրով, ուր կարելի է գտնել
1, թթենու մասին եղած եւրոպական և ռուսական նշանաւոր
գրուածքների ցանկը, 2, Կովկասում, Ռուսաստանում և Արտա-
սահմանում գտնուղ թթենու նշանաւոր տնկարանների և շերամա-

պահական հաստատութիւնների հասցէները և 3, Ռուսաստանում
եղած այն դպրոցների տեղը, ուր հնար կայ սովորել յատուկ
թթենու մշակութիւնը:

Հետաքրքրութիւնը լրիւ անելու համար ցոյց ենք տուել նաև
Ռուսաստանում եղած թթենու հարուստ ժողովածու (հերքարիում)
ունեցողների հասցէները:

Ն. Ս.

ՊՏՂԱԲՈՒԾԱԿԱՆ ՏՆԿԱՐԱՆ

ԵՂ. ԱԻՍԱՐԳԱՅԵԱՆՆԵՐԻ

Ծախում է պատուաստած աղնւացեղ տեսակի՝ արտասահամանան, թուսական և տեղական պտղատու ծառերի տնկիներ 1, 2, 3, և աւելի տարեկան:

Պատուաստած անկորիզ և խառ.—բռնքի տնկիք.

ԳՆԵՐԸ ԶԱՓԱՒՈՔ ԵՆ

ԵՒ

ՄԱՏՇԵԼԻ ԱՄԵՆԻՆ

Խնձորենի, տանձենի, սալորենի, ծիրանենի, նշենի, սերկելիի միամեայ տնկու հատը արժէ 20 կ. հարիւրը՝ 25 ր. կեռասինի, բալենի, թզուկաւոր խնձորենի և տանձենի մի տարեկանի հատը՝ 25 կոպ. հարիւրը՝ 20 բուր. երկու տարեկանի հատը՝ 35 կոպ. հարիւրը՝ 30 ր.

Պատկերագրաբարտած մանրամասն ցանկը (Բառարարակ) ցանցողներին կուղարկվէ ձրի:

Հասցէն Ստ. Տեղ. Զակ. Ջել. Դօր. Եր. Ավարկացածեմծ.

ԹԹՈՒՆԻ ԵԽ ՆԲԱ ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ

Ա.

Ընդհանուր տեսութիւն:

Թթենին (պելկովից, Morus) պատկանում է բուսական Moraceae ցեղին:

Մի քանի բուսաբաններ համարում են նրան անկախ որ և է բուսացեղից, իսկ ոմանք էլ վերագրում են կնճնենու (ՎՅԶՕՎՅԽԵ, Ալմասեա) ցեղից ածանցուած:

Թթենին լինում է իբրև ծառ և թռփ. սակաւ տեսակներ կան, որ աճում են իբր բազմամեայ խոտաբոյսեր:

Բոլոր տեսակների տերեները, ընդհանուր առմամբ, իբար նման են. տերեսակոթի տակից դուրս են զալիս նրա արական և իդական ծաղիկները. արականը՝ երկարաւուն է՝ հասկանման կամ վրձինանման, իսկ իդական ծաղիկները նրանից աւելի կարճ են ու խոյրածե բռնում են պտղասազմի վերին մասը. պատահում է, որ միենոյն երախակալի (կոթ) վրայ լինում է երկսեռ ծաղիկներից էլ:

Թթենու ծառը լինում է մշակովի և վայրենի—ինքնարոյս աճած (Սև ծովի արեւելեան ափերում, Կուր գետի ստորին մասերում և այլ տեղերում):

Ամենքն էլ կաթնագոյն հիւթ ունեն. սերմը ծածկուած է ջրալի և զանազան գոյնի մոռվ. իսկ ինքը, կորիզը, միապաղադ գնդիկ է, պատած նուրը ու բարակ մաշկով:

Թթենիների տեսակները շատ են (26 տեսակ). Նայելով կլիմային, հողին և մշակութեան կերպին, նրանք իրարից քիչ թէ շատ տարբերում են տերեներով, պտղով, բնափայտով, կեղենով և կեանքի տեսողութեամբ:

Կան՝ որ աճում են արեագրածային երկիրներում, մի տեսակը—բարեխառն կիմայի տակ և կան տեսակներ, որոնք աճում

Են ցուրտ երկիրներում, նոյնպէս և մինչև 4—5 հազար ոտ. ծ. մ. բարձրութիւնների վրայ կամ մինչև 60° հիւս. լայնութեան տակ:

Առհասարակ թթենու բոլոր տեսակները իրենց պտղով, տերևով, կեղեով, փայտով և արմատներով մարդուս անտեսութեան, արդիւնաբերութեան և բժշկութեան մէջ նշանաւոր դերեր են կատարում:

Թթենու տերեւները:

Թթենու բոլոր տեսակների տերեւների եղբածայրերը ատամաւոր կտրատուած են, իսկ իրենք, տերեւները, լինում են ձուածե, կլորաւուն, բթածայր, երկարաւուն, սրածայր—կոնածե ոմանք էլ 2, 3, 5, 7, 9, 18 և մինչև անգամ 20 թաթերի կտրատուած և այլն: (նկ. № 1)

Թաթատերնւ թթենիք:

Թթենու գրեթէ բոլոր տեսակների, բացի մի քանիսից, տերեւները շատ կամ քիչ թաթածե կամ բլթակածե են լինում, մանաւանդ սպիտակապտուղները: Ա. Կերներ ֆօն-Մարիլաունը նկատել է, որ թաթաւոր տերեւները լինում են հաստաւուն կտրած ճղներից դուրս եկած ուղղածիդ և ուժեղ սոսերի կատարներին և նա հնթաղրում է, որ նրանք ծառի բարձր մասերումն են գոյանում, որպէսզի արեի լոյսը և տաքութիւնը հեշտութեամբ կարողանան անցնել իրենցից ցածում եղած տերեւների վրայ:

Ն. Շաւրովը իր դիտողութիւնից եզրակացնում է, թէ թաթատերեւները ձեւանում են հետեւալ պատճառներից: Տերեւների կենդրոնական կամ հիմնական երակի երկու կողմերից դուրս եկած երակները եթէ շատ չեն ճղնաւորում, տերեւը ամբողջ և անբաժան է մնում, իսկ եթէ ճղնաւորում են, հետեւաբար տերեւը բաժանուում թաթեր-բլթակներ են կազմուում: Կարող է լինել 2-20 թաթ:

Մինչև անգամ կարելի է ընդհանուր կանոն համարել.

ա) Նորածիլ տնկիների տերեւները առհասարակ լինում են անթաթ, բայց երբեմն հէնց մի քանիսի սկզբնական տերեւների


վրայ նկատում են թաթեր:

բ) Հասակաւոր, մանաւանդ պատճ. աստած թթենիների տերեւները լինում են անթաթ.

գ) Թթենիների մի քանի տեսակները տերեւի են հակուած թաթատերեներ արտադրել:

դ) Թաթատերներ լինելու նշանները երբեմն կոկոնը բացւելիս է նկատում:

ե) Ա. Ելի շատ թաթաւոր տերեւներ լինում են գետնի մօտ—



Նկար. № 1

ա, չըռ, թաթաւոր, բ, պատճառատած—անկորիզ թթենու, ց, թեհանի և ձ, եազոնական թթենու տերեւներ:

բնից դուրս եկած սոսերի վրայ ե

զ) Բոլորովին անթաթ համարուած ծառը կարող է շատ թաթաւոր տերեւներ արտադրել, երբ նրա սոսերը սկսեն յաճախ կտրատել, ինչպէս որ պարզապէս տեսնում ենք շերամի համար պահուած ծառերի տերեւները:

Այդ, թաթեր գոյանալու պատճառներն են 1) ծառի բնական յատկութիւնը, 2) առանց մարդկանց ձեռք տարւ ծառերի բնի ցածի կողմը դուրս եկած սոսերը ընդունակ են թաթեր առաջացնել և 3) եթէ ծառի սոսերն յաճախակի կտրատուեն: Այս վերջին երկոյթը բացատրում է նրանով, որ ծառի հին սոսերը կտրելով նըանց տեղը սկսում են դուրս գալ նոր ընձիւղներ և նոր տերեւներ. բայց քանի որ ծառը առողջ և ուժեղ է, և նրա միջի կեն-

սատու հիւթը առատ ու այդ հիւթը փոխանակ շատ հաստ ոստերի և մեծամեծ տերեների մէջ մտնելու, ստիպուած է լինում ուժեղ թափով շարժել նոր ընձիւզների և մատղաշ նորաբոյս և համեմատարար սակառւաթիւ տերեների մէջ. հէնց այս տարբերութեան շնորհիւն է, որ յագուրդ տուած հիւթը տերեների երակների մէջ մտնելով փոխանակ նրա ուղղութեամբը հոսելու, ոյժեղ և առատ հոսանքի յորձանքից ստիպուած նորաբոյս տերեկի երակները ճղնաւորուում են ու թաթեր—բլթակներ առաջացնում:

Հետեարար, թաթերի կազմելիը առաջանում է բնական պատճառից և չի կարելի ընդունել որ այդպիսի տերեները, ինչպէս ենթադրում են մի քանի շերամապահեր, անպէտք լինեն շերամի համար:

Ժագումը եւ տարածւիլը:

Թթենու ամեն տեսակներիցն էլ աշխարհիս զրեթէ ամեն կողսերում կան. պատահում են որոշ տարածութիւններ, որոնք վայրենի թթենիների անտառներով են ծածկուած լինում: Աւանդարար ասում են, որ խառ բուրի հայրենիրը Պարսկաստանն է, իսկ սպիտակ քրենու՝ ինչպէս կորպաւորի, նոյնպէս և անկորիզի հայրենիրը Զինաստանին են վերագրում, որտեղից էլ դարեցի ընթացքում դէպի արեմուտք տարուելով հասել է Անդրկովկաս և այնտեղից անցել է Եւրոպա:

Ռուսաստան նա մտել է Հայ վաճառականների ձեռքով, XVII դարում, Ալեքսէյ Միխայլովիչ թագաւորի ցանկութեամբ. իսկ նրա յաջորդի, մեծն Պետրոսի, օրով երեան եկան Ռուսիոյ հարթութեան հարաւային շերտերում թթենիների ընդարձակ տնկարաններ և շերմապահութիւնը սկսեց զարգանալ. բայց ափսոս որ երկար չէ շարունակւում այնտեղ այս շահաւէտ արդիւնաբերութիւնը. Մեծ վերանորոգողի և շերամապահութեան պաշտպանի մահից յետոյ հետոյ հետէ թուլանում է շերամապահութիւնը, հետեարար և փշանում են տնկարանները. միայն վերջին տասնեակ տարիներում այն տեղերում այս ճիւզը գարձեալ գառնում է հետաքրքիր և երկում է նոր եռանդ՝ պարապելու շերամապահութեամբ:

Մշակութիւնը:

Թթենին, սակաւ բացառութեամբ, աճում է ամեն տեսակ հողերում. առաւելապէս սիրում է նա չորաւուն հող, որի մէջ արմատները թէ լաւ են տարածում և կարգին ամրանում. իսկ կրային, ճահճային, թացաւուն և բարակաշերտ հողերում նա չի կարող լաւ զարգանալ. այդպիսի տեղերում անկուած ծասկը շուտով կըտկարանան ու կիչանան:

Միւս բոյսերի նման սա էլ է սիրում արե, լոյս ու արձակ տարածութիւն. ստուերում աճածը լինում է թոլլ, նուազ և ապարդին՝ թէ տերեկի և թէ պտղի կողմից:


Եթէ թթենու տնկարանի հողը լաւ մշակուի—պարարտացնուի, ժամանակին կանոնաւոր չափով ջրուի, տեղն էլ արևահայեաց լինի, այն ժամանակ նրա արձակած ոստերը կլինեն առողջ ու երկայն, տերեները՝ բազմաթիւ ու զուարթ, իսկ պտղատուների պտուղը՝ աղնիւ և ընտիր:

Երկարակեցութիւնը:

Թթենու կեանքը կախուած է նրա մշակելու եղանակից, տեղի կլիմայից ու հողի յատկութիւնից: Ինքնարոյս և անարատ մետցած ծառը կարող է ապրել 200—300 տարի, համում է մինչեւ 70 ոսնաչափ բարձրութեան և բնի հաստութեան տրամագիծը՝ 2—3 ոսնաչափ. իսկ շերամի համար գործադրուած ծառը մեզ մօտ հազիւ է ապրում 10-15 տարի միայն, որովհետեւ տերեկ ստանալու համար ամեն տարի ոստերը կտրատուելով ծառը վիրաւորուում, ժամանակից առաջ ուժասպաս լինում, անտեղի և անժամանակ հիւթեր գուրս տալով տկարանում է: Պտղատուներից պտուղը թափելու համար Երևանում և էլի շատ տեղեր անմտաբար թակով կամ կացնի գիւրով հարուածում են հասած պտուղով լի նոստերը, որպէս զի ուժովին ցնցումից պտուղը թափուի. այսո, թափում է, բայց զրա հետ էլ ծառը վիրաւորուում-վնասուում է ու այս զործողութիւնը $1\frac{1}{2}$ —2 աճուայ ընթացքում կրկնուում է 10-15 անգամ: Խեղճ ծառը հազիւ թէ սկսում է ծածկել իր վէրքը, գալիս է յաջորդ ամառը, նոյն հարուածներն կրկնուում են խեղճի գլխին, նոյն կամ նոր տեղի վրայ. ուրեմն պտղատու ծառը

Վիճակուած է լինում մշտապէս խեղանդամ մնալ. դրանից ոստերի զարգացումը անկանոն են լինում ու ծառը արտապապէս դէպի մահն է տարւում ու կեանքը. բնականից կարծ-հազիւ 50-60 տարի է լինում:

Կաւ կլինի, եթէ հասած պտուղը թափելու համար ծառի ոստը շաղահարուի կամ թէ ոտի թեթև հարուծով պտուղը թափուի ծառի տակը բռնած մաքուը—մեծ սաւանի վրայ. ինչպէս անում են Ագուլիսում, Օրդուրաթում և այլ տեղեր. (Նկ. № 2) երեսում է որ այս տեղերում թթենու արժէքը աւելի են գնահատում, որովհետեւ աշխատում են ծառի կեղել և բնափայտը չը վիրաւորել.



Նկ. № 2 Թթի թափ տալը

Արտաքին կեանքը:

Զմեռուայ ցրտերից յետոյ, երբ արեի ձառագայթները մտնում են օդից հողի մէջ, հանգիստ առած ծառերի կեանքը սկսում է վերանորոգուել—նրանց միջի կենսատու հիւթը—արիւնը շարժում, որով և կենսունակութեան նշանները երկում են կոկոնների—աչքերի տողելովը. սա արտաքին երկոյթն է, որով իմացում է թէ ծառը ցրտից կամ որ և է պատահարից ձմեռը չէ

վնասուել, ուրեմն և կենդանի է: Տողել սկսած աչքերի զարգացումը կախուած է կլիմայական պայմաններից. եթէ եղանակը ցրտային լինի՝ ուշ կը բացուեն, իսկ եթէ տաք—շուտ. հիւսիսային և ցուրտ երկիրներում աչքերի տողելը սկսում է մարտի վերջից մինչև ապրիլի կէսերը, իսկ հարաւային և տաք երկիրներում—աչքերը սկսում են տողել յունարի վերջերից մինչև մարտի կէսերը և նայելով տեղին, որդը ջում-բացում են տերենները մարտի կիսից մինչև ապրիլի կէսերը:

Երբ աչքը բողոջում է, շուտով բացում են տերենները և առաջ են գալիս ընձիւղները ու այս, նայելով եղանակին, լինում է արագ կամ դանդա՞ղ՝ 2—3 շաբաթ, որից յետու ծառը ծածկում է թարմ բնձիւղներով և բաւական խոշոր, դեռ ես դեղնականաչ, տերեններով և հազիւ մի շաբաթից յետոյ, եթէ եղանակը նպաստի, թէ ընձիւղները և թէ տերենները սկսում են ամբանալ ու զարգանալ և տերենները հետպէս մութ կանաչ գոյն են ստանում:

Շերամին կերակրելու համար հէնց այսպիսի մատղաշ ու քնքոյց տերենն է պէտք. եթէ մայիսի կէսերին եղանակը աւելի տաքանայ և չոր բամիններ լինեն, տերերը կը կոշտանայ և որդին կերակրելու անպէտք կլինի: Խոնաւ և ոչ շատ տաք կլիմայ ունեցող տեղերի տերենները կերակրելու պէտքական են լինում մայիսի վերջերից մինչև յուլիս:

Ժաղկելը եւ պտղակալելը:

Շաղկում է թթենին, հէնց որ սկսում են տերենները բացուիլ. այս միջոցին ծառի աճումը մասամբ գագարում է, բայց սա կարծատես է լինում՝ 1—2 շաբաթ. արական ծառի տերենները սկսում են աճել-մեծանալ՝ երբ ծաղկինները թափում են, իսկ իգական ծառի տերենները և ընձիւղները ծաղիկների հետ են զարգանում, թէ և դանդաղ. և երբ ծաղկելու շրջանը լրանում է, տերենները համար են իրանց բնական միծութեան ու ինսամքով ծածկում են պտղակոճակը:

Թթենու ծաղկելը, նայելով տեղին, սկսում է ապրիլի կիսից մինչև մայիսի վերջերը և համապատասխան էլ ծաղկելուն, պտղով համար է յունիսի սկզբներից մինչև յուլիսի վերջերը. ցուրտ տեղերում մինչև սեպտեմբերն էլ դիմանում է:

Երբ պտղի միջի սերմերը լաւ են զարգանում, նըանց ըջապատող միսն էլ հասնում է ու էլ չը կարողանալով դիմանալ ծառի-

վրայ —թափուում են, թափուում են նաև քամուց և շաղահարուելուց:

Եթէ ծառը պահում են տերե ստանալու համար, ուրիմն ամեն տարի նրա հորաբոյս ոստերը կտրելով չի ծաղկի և պատուզ չի տայ. իսկ եթէ նոր ոստը շատ ուժեղ և զարգացած լինի, հէնց նոյն տարին կը ծաղկի և պատուզ կտայ, միայն շատ սակաւ:

Տերեւը ծառի վրայ բաւական երկար ժամանակ է դիմանում. եթէ սաստիկ ցրտեր վրայ չհասնեն, մինչև ձիւն գալը կարող է դիմանալ ծառի վրայ, իսկ տեղին հայելով նա սկսում է գեղնել օգոստոսից. նախ՝ գեղնում են ծառի ցածի ոստերի վրայ եղած թոյլ և հին տերեները և յետոյ, տատիճանարար, գեղնում են միւսները. այս իսկ շրջանի ժամանակ տերեներից շատը ծածկում է ժանդով^{*)} ու զորշ գոյն են ստանում:

Աշնան վերջերին տերեների թափուելով աւարտում է ծառի աճման շրջանը և նրան հետեւմ է հանգստեան շրջան, որը տեսում է մինչև նոր կոկոնների երկալը, այսինքն մինչև գարուն, ուրիմն վերջին շրջանը տեսում է $3\frac{1}{2}$ —4 ամիս:

Ներքին կեանքը:

Ծառի ներքին կեանքի երկոյթների վերաբերմամբ պէտք է ի նկատի առնենք նրա միջի հիւթի շարժողարթինը:

Ծառի միջի հիւթը-ջուրը բարձրանում է արմատներից գէպի վեր՝ տերեները և յետոյ այնաեղից հոսանքը վերագանում է գէպի արմատները. առաջին շարժումը—բարձրանալը, կատարուում է բնափայտի միջոցով, իսկ երկրորդը—իջնելը, կատարուում է կեղեւի տակի փափկանիւթ շերտերի—պատուրակի միջոցով:

Ծառի հիւթի հոսանքը

Զմեռուայ հանգստեան շրջանը աւարտելուց յետոյ տերեի զարգացման, ծաղկելու և պաղարերութեան հետ ծառի միջի հիւթի հոսանքը հետզհետէ աւելանում է, որոնցից յետոյ, հոսանքի շարժութիւլը որ աւուր վրայ գանգաղանում ու զրեթ է աշնան վերջերին դադարում է՝ երբ տերեները թափում և ձմեռուայ ցրտերն են.

^{*)} Տես՝ «Թթւնու հիւանդութիւնները»-ի բաժանում:

Ակսւում:

Այս երկոյթները շատ կարեսր են շերամապահներին երկու տեսակէտով. 1) Հիւթի հոսանքի կանոնաւորութիւնից է կախուած թթենու կանոնաւոր սննդառութիւնը և նրա աճումն. իսկ անկանոն հոսանքից, որը շատ անզամ տեղի է ունենում անփութութիւնից, այն է՝ ծառի բունը երբ վիրաւորում—վնասում ենք, հիւթի հոսանքը գաղարում կամ կանգ է առնում և կամ թէ բնափայտի վնասուած տեղերից գուրս է հոսում. Ուրիմն պէտք է զգոյշ լինել ու երբէք անտեղի վնաս չհասցնել բնափայտին, ոստերին կամ արմատներին, իսկ եթէ անհրաժեշտ կարիքը պահանջում է նրանց կարել, պէտք է անմիջապէս վէրը սպեղանիով ծածկել, որ ծառի հիւթը չարտաթորուի:

և 2) Հիւթի շարժման ժամանակի հետ պէտք է համաձայնացնել ոստերի կարելը կամ ծառ անկելը, այն է՝ գարնանը, մինչև տերեների երևալը. եթէ հարկ լինի կարել ոստերը, պէտք է անել այդ նախ քան հիւթի շարժւիլը, եթէ միայն եղանակը շատ ցուրտ չէ. իսկ անկելը լաւ է հոսանքի շրջանի վերջերին՝ աշնանը, նոյնպէս և գարնանը՝ գիւտրուարից մինչև մարտ:


Թթենու տեսակները:

Անգրկովկասեան շատուկ թթենու տեսակներից գլխաւորներն են. կորզաւոր կամ հասարակ բուք. ջըռ-թութ (Morus vulgaris կամ ցաթրա L.). ուս բնական սերմից աճած-անպատուաստած տեսակն է. ճղները ոստալի և ծուռ, տերեները մանր, պառզը՝ մանր, սպիտակ, ու կամ մոռ զոյներով, ուտելու կամ որեիցէ բան արտազրելու համար շատ գովելի չէ. սրա տերեն է միայն պէտքական շերմամի համար:

Շահ-բարք: Պտուղը մեծ ու քաղցր. սա պատուաստած տեսակիցն է. այս պաղից կարելի է օղի, բաքմաղ և պաստեր պատրաստել. տերեն էլ շերմամի համար շատ ձեռնտու է, որովհետեւ թէ մեծ-մեծ է և թէ ոստի վրայ խիտ է շարուած:

Անլորիզ բարք-(բէգանա-թութ, Morus alba L.) Սա բացառապէս պատուաստած տեսակն է. պառզը (մատզաղ ծառինը) բաւական մեծ, քաղցրահամ, հիւթալի և բարեհաշակ, որոնք ինչպէս թարմը նոյնպէս էլ չորացածը լինում է համեղ և միշտ գործածական. սրանից ստացած օղին, գինին, բէքմէզը և պաստեղը միշտ աղնիւ.

տեսակիցն են և շուկայի լու պահանջ են լինում. Նրա տերեները շերամին տալիս են վերջին քնից յիշոյ:



Նկ. № 3

Հինգ տարեկան պատուաստած սպիտակապտող թթենի:

Սպիտակ թթենին աւելի շատ է մշակւում Նրա մի քանի յարկելի առաւելութիւնների համար. Նա աճում է զրեթէ ամեն տեսակ հողերում, հարուստ է տերեներով և որ գլխաւորն է՝ շերամը որա տերելը գերադասում է միւս տեսակներից:

Անկորիդ թթենու ոստերը լինում են աւելի բարակ, եղային ու սակաւասուտ:

Թիհրանի բուր: Ճղները լիրկ, ազատ մանր ոստիկներից, տերեալի և երկայն. տերեները՝ անթաթ, կլորաւուն, փափուկ ու մեծ. պտուղը՝ կորզաւոր, խոշոր, քաղցր ու սպիտակ, երբեմն լինում է նաև մոռ գոյնով. իսկ չորացրածը՝ շատ զովելի այս տեսակի ծառը չեն պատուաստում, հէնց իր սերմիցն նոյն ծառն է ստացւում:

Խառու (Morus nigra): Տերեները կոշտ ու հաստ, շերտմի համար անպէտք են, պտուղը հաստաւուն, սև, մեծաչք ու թթուաշ. գործ է ածւում թարմը՝ ուտելու, իսկ չորացրածը կամ շաքարով եփած քաղցրաւենին մի քանի հիւանդութիւնների դէմ է գործածում (Succus Mori). Արա ճղները կարճ են և ոստղալի ու փայտը միւս թթենիների տեսակից աւելի փուլիր:

Խառութը շատ հին ժամանակներից ծանօթ էր եւրոպացւոց. Յոյների առասպելական կեսների շրջանից Ովկիդիան Պիրամի և Թիսրէի պատմութեան մէջ ասում է. Պիրամը ենթաղրելով որ իւր սիրոյ առարկան՝ Թիսրէլը մեռել է, յուսոհատութիւնից ինք զինքը սրախովնող արաւ թթենու բնի մօտ. եկաւ Թիսրէլը, տեսաւ իր անձկալու զիակը, ինքն էլ անձնասպան եղաւ նոյն ծառի տակ. Արանց արիւնը ծծւելով ծառի արմատների մէջ, ստիպակ պտուղը գունափոխուեց ու գարձաւ մութ կարմիր:

Յոյները այս ծառին համարում են խսիուն, որովհետեւ նա ուշ բացուելով աղատ է մնում գարնան ցրտահարութիւնից, դրա համար էլ նրան նւերել էին իրենց աստուածներին: Խառութը յիշում է նաև Աստւածաշնչում՝ Սամուէլի երկրորդ գրքում և Դաւթի Սաղմոսի մէջ: Պինէոսն էլ է յիշում սրան իւր գրուածքում:

Կայ նոյնպէս և մի տեսակ թթենի, որի ծառը թէ և լինում է շատ խոշոր, միայն անսպուղ է, որովհետեւ սրա ծաղիկները դուռ արու են, սրան մեզ մօտ ասում են որձատու րբենի (Sterile):

Սզա-բրենի, (Плакучая шелковица, Pendula), զէպի գետին կախ ընկած ոստերով. տերեները թաթաւոր իսկ եղբածայրերը սաստիկ կտրատուած. պտուղները փոքրիկ են ու ուեւ:

Կայ մի տեսակն էլ, որին ասում են եապոնական բբենի. սրա տերեները շատ խոշոր են լինում (4 վերշոկ լայն. և 6 վերերկայն). ոստերը երկայն, ճկուն ու զրեթէ լիրկ: Այս տեսակի տերեւով շերամին կերակրելը լաւ չէ, չընայելով որ սրա տերեւ-

Ները շատ քննոյց և փափուկ, բայց անսնունդ են:

Սրա սստերի միջուկը բամբակաշատ լինելով հատուածառստերը միւս տեսակներից աւելի յաջող են արմատակալում ու ծլում:

Բազմացնելը:

Թթենու տունկը կարելի է բազմացնել մի քանի միջոցներով, այն է՝ սերմը ցանել, արմատից աճած ընձիւղները անդավանել և դալար ոստերը կտրատելով տնկել:

1. Սերմը ցանելը աւելի նպատակայարմար է: Ամառը, պըտուղը համեմուց յետոյ սերմը կարելի է հանել ու թարմ-թարմ ցանել:

Կարելի է ցանել նոյնպէս գարնան սկզբին և աշնանը:

Սերմի փորձը: Թթի սերմը իր կենսունակութիւնը պահում է մինչև մէկ տարի. աւելի հինը անպէտք է՝ չի կանաչի:

Ցանելիք սերմը եթէ պէտք լինի դրսից գնել, հարկաւոր է նրան նախ փորձել և իմանալ թարմ է նա թէ ոչ. դրա համար վերցնում են մի պտղունց սերմ ու նրանից համարում-վերցնում են 100հատ ու մի-մի հատ ձգում են կրակի մէջ, նրանցից որը ճըրթալով վեր ցատկի, նշանակում է՝ կենդանի է, իսկ որը կրակի վրայ միաց ու այրուեց, նշանակում է՝ նա մեռած է. ու այդպէս, մի մի փորձելով, թղթի վրայ նշանակելու է թէ 100-ից քանիսը պիտանացու են և քանիսը անպէտք:

Կամ թէ սերմակայտից վերցնում՝ են մի ճամկ սերմ, համարում-աւանց ջոկելու վերցնում են 100 հատ, թրջում են ծծողական թղթից մի քանի թերթ ու այդ հարիւր հատ սերմը նոսր կերպով դարսում են թղթերի արանքներում այնպէս, որ իրար չըկացնեն. նոյն թրջած թղթով դրանց պէտք է ծածկել ու պահել 20—23⁰ Ռ. ջերմութիւն ունեցող սենեակում. նայելու է, որ թուղթը միշտ թաց լինի: Թղթի անդ կարելի է երկու կտոր բնակիք(բէչայ) վերցնել, միայն անպատճառ թաղիքները միշտ թաց պէտք է պահել: Բոլոր առողջ սերմերը 6—8 օրից յետոյ կծլեն. ծլածները համարելով կիմացուի թէ 100 ից որքանը կենդանի և որքանը անպէտք է. իսկ եթէ վերցրած սերմերը մինչև 20—25 օր չծլեցին, նշանակում է բոլոր սերմերը ցանելու համար անպէտք են:

Սերմ հանելը:

Սերմը պէտք է հանել կորպաւոր թթից. սերմացու պտուղը պէտք է երկրորդ անգամ թափ տուած բերքից վերցնել լաւ է, թէ ծառը մատղաշ լինի: Ծափից թափ տուած պտուղը լցնել մի կարասի կամ տաշտի մէջ, թողնել 2-3 օր, որ մի քիչ թըթուի, այսինքն պտղի միսը փափկի, յետոյ վերցնել քիչ-քիչ ու ձնոքերով լաւ տրորել սրան լցնել ջրով լի տաշտի մէջ, մասկեղեները և խակ սերմերը ջրի երեսը կըկագնեն, իսկ հասածները—տակը կիջնեն. տաշտը ծոելով զգուշութեամբ ջրի երեսի անպէտքները հեռացնել, իսկ տակը իջած սերմը մանրաաչք մաղից անցկացնելով փոկի մի շորի վրայ ու գնել ստուեր տեղ, որ չորանայ երբ բոլոր սերմը լաւ չորանայ, լցնել նրանց քաթանի քսակների մէջ ու կախել ներքնատան պատից. ներքնատունը եթէ շատ քամհար կամ շատ չոր լինի, սերմը կարող է շուտ ցամաքել ու կենսունակութիւնը կորցնել:

Մի գոյլ (վեղոր) պտուղից ստացւում է 1½ ֆունտ սերմ. 1 ֆունտի մէջ լինում է 120-200 հազար սերմ. 1 մսխալի մէջ կայ մինչև 2840 հատիկ:

Ցանելու եւ տնկերը ինամելու եղանակները:


Սերմը պէտք է ցանել նեղ (մինչև 2 արշին լայնութիւն ունեցող) մարգերում քաշած ակօններում կամ շաղացանը անել. նողը նախօրօք լաւ փորուած, պարարուացրած ու մաքրած լինի: Ցանելուց 8—10 օր յետոյ բոյսը կըծլի, շաբաթը մի ճամկ պէտք է զգուշութիւնով քաղնանել ու եթէ մարգը չոր լինի՝ ջրել. 5 տիրեկի որ հասնի, հանել այդ մարգից, մայր արմատի 2/3 մասը կարել ու սածիւ անել նախօրօք պատրաստած մարգերում՝ իրարից 4 վերցոկ հեռու. հետեւալ գարնանը նորից հանել նրանց, նորից մայր արմատի 2/3 մասը կարել, փիթած մասերը մաքրել-հեռացնել ու տնկել իրարից 8 վերցոկ հեռու. իսկ երբորդ տարին գարձեալ հանել, եթէ մայր արմատը երկարած-զարգացած լինի, կտրել, մաքրել անպէտքներից ու տնկել իր համար նշանակուած մշտական տեղում:

Մայր արմատի կտրատելու օգուածը այն է, որ նրա կողքից դուրս գան նոր արմատածեր, որոնք ծառի զարգանալուն աւելի նպաստաւոր են:

Այս կերպով կըթած թթենին կլինի միշտ առողջ և տերե-

Ները շերամի համար պատուական. իսկ եթէ ուզենանք որևէ աեսակից պատուասաել, պէտք է նրան տնկարանում կատարել և 1—2 տարուց յետոյ միայն իր մշտակոն տեղում փոխադրել:

Մարգերում ցանուած մատղաշ անկիքը ջրասակաւ տեղերում արեի կիզիչ ճառագայթներից պահելու համար կարելի է նրանց ստուերատու կափարիչներով պաշտպանել. իսկ սրան շնուռմ են բարակ տախտակից, խսիրից, ծառի ճիներից և այլն. կափարիչները պէտք եղած ժամանակը դնում են մարգի արեւատյեաց կողին ու նրա տակը նեցուկ տնկելով ծածկում են տնկիքը նրա ստուերով: (Նկ. № 4)



Նկ. № 4

Մարգում ցանած թթենու տնկիքը պատշպանուած են շարժական ծածկոցներով:

“արնանացանը ցանելու է ազրիլի սկզբից մինչև մայիսի 15-ը”

Ամառնացանը՝ երր թութը լաւ հասնի, սերմը հանել (զեր յիշւած հպանակով) ու ցանել.

Իսկ աշնացանը անելու է տերևաթափին:

Ցանած մարգերը ջրելու է կամ ցնծուղով կամ թէ զնացական ջողվ. միայն վերջին զէպըում նոր ցանուած մարգերը այնպէս ջրել, որ ջրի հոսանքը մարգի գլխի սերմը չողողի ու նրա մի կողմը ժողովի:

Սածիւ անելիս նայելու է որ տնկու բունը շատ խոր չըթաղուի հողում, դրանից կարող է արմատը փթել, այլ ծածկելու է հողով միայն այն մասը, որը եղել էր իր ծած մարգում:


Նախ քան տնկելը պէտք է տնկու արմատները մէկ-մէկ լաւ տնդղել, աւելորդ ու փթած մասերը կտրատել, թաթախել

նրան կովի թարմ թթքից և կաւից հաւասար չեռվ վերցրած ու ջրով լուծած շփոթի մէջ ու այնպէս տնկոտել, լաւ հողով արմատը ծածկել ու նոյն թթքաշփոթով ջրել. այսպէս տնկուած ծառերը գրեթէ առանց վրիպելու բոլորն էլ կը կանաչն ու շուտ էլ կսկսեն զարգանալ:

Տնկարանների շարքերը լինելու են հարաւից-հիւսիս ուղղութիւնով,

Հատուածառստերով—շիւերով (շերեօք եռւցուց) էլ կարելի է շատացնել թթենու տունկը, բայց այս միջոցը թէն արնքան յաշող չէ լինում, այնու ամենայնիւ ցոյց տանք գրա եղանակն էլ: Դեկտեմբերին սուր զանակով կտրում են դալար, բայց լաւ հասած սստերի երկու ծայրերից շեղ դիրքով 8—10 վերոկ երկանութեամբ պէտք է այնպէս կտրել, որ կտրուածքի երկայն կողքի ծայրին լինի մի աչք, այդպիսի կտրած շիւերից թեթև խուրձեր կապել, դարսել մի փոսի մէջ ու ծածկել հողով. գարնանը հանել ու տնկոտել յատուկ պատրաստած մարգերում, այնպէս, որ հողի մէջ թաղուած լինի շիւից 4—6 վերշոկ եթէ մարզը միշտ թաց պահուի, կարող են այդ սստերը շուտառվ արմատակալել և ծլել. 1—2 տարի յետոյ կարելի է նրանց բոտ կամաց պատուաստել կամ տեղափոխել մշտական տեղի վրայ: Աւելի յաջող են արմատակալում հապոնական տեսակի թթենու շիւերը:

3 Անցալիս անելու համար (օտածկա, marcotte) վերցնում են պատուաստած թթենու ցածրագիր սստերը որը ստանալու համար պէտք է թթենին պատուաստել հողի բերսնից. հէնց այդպիսի պատուաստած ծառը որ կտրենք հողից 8—10 վերշոկ բարձր, նրա բնից շուտառվ կամեն շատ նոր ընձիւղներ, վերցնել այդ ընձիւղները, ծոեցնել ու միջի մասը թաղել հողում, իսկ նրա կատարը, որ հողից դուրս է լինելու, կանգնացնել ուղղահայցու կապել մի ցոցից, մի տարուց յետոյ հողում թաղուած սստը արմատակալուած կը լինի, կարելի է նրան կըտել ու մայր բնից հեռացնելով տնկել իր համար նշանակւած տեղում: (Նկ. № 5)



Նկ. № 5

Անցալիս

Այս կերպը թէ հեշտ է և թէ միշտ յաջող է լինում
Անդալիսը անելու է ծառի հիմքը շարժելու սկզբներին:

Հողը պարարտացնելը:

Քանի որ թթենին տերեկի կամ պտուղի համար միշտ շահագործում է, հետեւարար և նրա տակի հողը բաւականաչափ թուլանում և ուժապառ է լինում և որպէսպի կարողանանք շարունակարար ստանալ լաւ տերեկ և աղնիւ պտուղ, պէտք է հողը լաւ մշակել ու պարարտացնել:

Իւրաքանչիւր տարի ամեն մի ծառի շուրջը, բնից 2 արշին շրջապատ, պէտք է 2 անգամ փորել, մէկը՝ փետրտարին կամ մարտին և միւսը՝ պտուղը կամ տերեկը վերցնելուց յետոյ: Տարուայ մէջ պէտք է մի քանի անգամ ծառի վիզը լցնել ու նրա շուրջը աճող ժանգալ խոտերը մաքրել թթենու անկարանը պէտք է 2 տարին մի անգամ պարարտացնել լաւ փթած գոմաղբով. թարմ աղբ երբէք չբանացնել:

Պարարտացնելու համար պէտք է աղբը ծառի շուրջը թափել աշնանը և խառնել նրա տակի հողի հետ:

Եթէ թթի տնկարանի միջանցքներում կայ ցանուած որեւ է խոտ, (եօնջա, կորնզան և այլն) և սրանք ժամանակին պարարտացնուում են, էլ հարկ չկայ թթենիքը առանձնապէս պարարտացնել:

Բացի սովորական գոմաղբից, կարելի է նաև գործածի աղբը շփոթ (ՋԱՋՁ) սրա համար՝ պէտք է ծառի շուրջը, բնից $1\frac{1}{2}$ արշին հեռու բնիրներով 3—4 ծակեր անել $1-1\frac{1}{4}$ արշին խորութիւնով ու շփոթը լցնել նրանց մէջ:

Ողոգելը:

Զոր սյեն տեղեր ում թթենու առինսուրեւութիւնը (տերեկը կամ պտուղը) կանութե՛ն ունի ըստ մեծի մասին տունկերը ժամանակին ջրելուց:

Նոր ցանած միամեայ մարգերը լաւ է ցնծուղով ջրել, իսկ մեծ տնկարանները պէտք է գնացական ջրով ջրել սակայն այսպէս, որ ծառերի տակ ջուրը երկար չկանգնի—չըլճանայ: Եթէ տնկարանի տեղը զառի վայր է, լաւ է ծառերի շուրջը, բարձր կողմը 4 իսկ ցածի կողմը 5 վերշոկ խորութիւնով և 2 արշին ընից հեռու, փոսեր փորել ու ջուրը կապել որ փոսերը լցւին:

Զուրը, ինչպէս ամեն ծառերին, նոյնպէս էլ թթենուն, ասցինք, որ անհրաժեշտ պահանջ է, որովհետեւ բոյսի արմատները հողի մէջ խորութիւնով ծծում են նր մասից իրենց լսննդեան կա-

բեր նիւթերը, միենոյն ժամանակ էլ ծծում են հողի միջում դած հանքային աղերը, որոնց լուծում է ջուրը, բայց աւելորդ ջուրը փոխանակ օգուտի կարող է ծառին վնասել,

Կանոնաւոր պահուած և կրթուած թթենու տնկարանը բառական կլինի տարին 3 անգամ ջրել. մէկ՝ տերեները բացեկիս շերամին կերակրել սկսելուց առաջ, երկրորդ մասպամը՝ շերամի կերակրելը երբ տարատի, այն է՝ կտրած ոստղերի տեղ երբ նուրմերն են սկսում դուրս կաւ իսկ երրորդ մասպամը ջրելու է ամառուայ ընթացքում, երբ շատ տաք և երաշտ է լինում եղանակը եթէ տնկարանի հողը ծանը լինի, կամ եղանակը բոլորովին երաշտ, պէտք է 2 շաբաթը մի անգամ ջրել, միայն թէ թեթև ջրով, ծառերի տակը չըլճացնել: Ապա թէ ոչ արմատային հիանալուքին կստանայ ծառը:

Զրելուց յետոյ պէտք է ծառերի տակը փուխրացնել, որս պէսզի հողը չընաբնըքի, որից կարող են կորատուել—վնասուել արմատները. բացի այդ, հողը փուխրացնելով երկար է պահովանուում նրա սառերկրեայ խոնաւութիւնը, այսպէս որ սրանով տնկարանի ոսոգման հարցը շատ է թեթևանուում:

Պատուաստելը:


Ինչպէս պտղատու միւս ծառերը, նոյնպէս էլ թթենիքը կարելի է պատուաստել 1) աչքապատրիսով, 2) խողովակապատրիսով և 3) կեղևապատրիսով. սրանցից ամեն մէկը ունի իր առաւելութիւնը, բայց աչքապատրիսը աւելի յաջող է և գերազանիիր:

1) Աչքապատրիս կարելի է անել ինչպէս գարնանը նոյնպէս էլ ամառը. գարնան պատուաստը անւում է շատ լաւ արմատակակալած ջրերի վրայ, իսկ ամառուայ աչքապատրիսը անւում է աշնան կամ վաղ գարնան տնկած ջրու տնկիների վրայ:

Գարնան պատուաստի համար պէտք է նախօրօք պատրաստել պատուաստու աչքերի շիւերը. ընտրելու է ուղած տեսակի հասուն և առողջ ծառեր, մինչեւ նրանց հիմքի շարժուիլը (գեկոտեմբամարտ) կտրել կէս արշինաչափ երկայնութեամբ պատուաստատու լաւ աչքեր ունեցող առողջ և ուժեղ մի տարեկան ոստերի լաւ տեղերից շիւեր, դրանց գնել արև չընկնող նկուղի կամ մի ծածկի տակ ու կիսից աւելի թաղել չոր աւաստման անպէս, որ շիւերի գլխինը 2 վերշոկաչափ գույք պատճենագրութիւն աւաստման առանցք ծառութել շիւը, մինչեւ այլս ԱՎԱՐԱՅ ԱՎԱՐԱՅ Եթե ոդիմանակ առանց-

ծլելու, իսկ հրբ ծառերի ջուրը սկսի շարժուիլ, կարելի է պատռաստել:

Եթից կտրում—հանում են վահանաձև աչքերը (կոկոններ) այնպէս, որ աչքի հետ վերցնուի փայտի մէջ խրուած նրա ոստղարմատը:




Նկ. № 6

Պատռաստի համար աչք ունեցող ոստ
և պատռաստ անելու դանակ:

Պատռաստացու ոստի կեղել սուր գանակով, ուռսաց «Տ» տարի ձեռվ կտրել, նոյն գանակի ծայրով կտրած կեղելը հետացնել ու արդէն հանած վահանաձև աչքը խրել այդ կտրուածքի մէջ ու կեղեները վրայ բերելով թելով կամ թթենու փափուկ կեղեով կամ բաֆֆիով լաւ փաթաթիլ. պատռաստած ոստի գլուխը կտրել ու սպեզանիով ծածկել. ամառուայ ընթացքում այդ ոստից կարող են, ինչպէս պատռաստած նոյնպէս էլ չպատռաստած աչքերից, աւելորդ ընձիւղներ (հարամիք) գուրս գալ, պէտք է նրանց կտրել—մաքրել ու թունել մի հատ պատռաստած ընձիւղ:

Անառի պատռաստը անելու է, երբ գարնանային ոստերը լաւ պնդացած—հասած լինին. այդ կլինի յունիսի կէսերին. պատռաստած աչքի մօտ տերելը կտրել, պատռաստատեղը լաւ մաքրել փոշոց, նոյնպէս մաքուր են լինելու աչքը, զանակը և պատռաստղի ձեռները, ապա թէ ոչ, եթէ կտրուածքի մէջ քիչ փոշի ընկնի, պատռաստը չի բռնի: (Նկ. № 7)

Ամառուայ աչքապատրիսի աչքը կտրել—հանելու է առանց բնափայտի կտորի. յաջող արած պատռաստը իննը բրորդ օրը կը-



ա

բ
նկ. № 7

դ

ա. Պատռաստացու աչքը ինչպէս է հազցնուում. բ. պատռաստի համար կտրած կեղելը. դ. պատռաստը կապած. գ. պատռաստացու հանած աչքերը:

ծլի, պէտք է հէնց այդ ժամանակն էլ պատռաստի կապը թուլացնել:

Ինչպէս գարնանային, նոյնպէս էլ ամառնային պատռաստը կարելի է անել ուղած բարձրութեան վրայ. մի ոստը մի քանի տեղից կարելի է պատռաստել, մի տարուց յետոյ պէտք է ուժեղ ոստերից մէկը պահել ապագայ բնացու, իսկ միւսները կըտրատել—թափել, բայց եթէ պատռաստը գետնահան է արուած, պատռաստած ոստերը կարելի է անդալիս անել:

Խոդովակապատռաստ (լուսպատրիս): Գարնանը, երբ սկսում է ծառի ջուրը շարժուիլ, մի պայծառ օրւայ առաւտ կամ կէսօրից յետոյ պատռաստացու ոստի գլուխը և վրայի բոլոր ոստիկները կտրել, յետոյ ընտրել դրան- համաչափ, ցանկացած տեսակի լաւ հասած մի ոստ, կտրել կեղել լայնքի շրջանակով այնպէս, որ ամեն կտրուածքի վրայ լինի 2—3 աչք, 1 վերշոկ երկայնութեամբ, երկու մատով զգու-




Նկ. № 8

Հուլապատրիս: Այս տեսակ պատուաստը շատ ընդունուած և գործազրւում է Բագւայ նահանգում. թէ և այստեղ էլ յաջող է անցնում, բայց, ինչպէս յիշեցինք, փորձառու հեղինակաւորները աչքապատրիսը միշտ աւելի ապահով և գերազանցի են անակն են համարում:

Ճեղքապատրիս: Մրա համար պատուաստացու ծառի բունը հորիզոնական սղոցում են, վերցնում պատուաստացու 2 աչք ունեցող ոստը՝ 1—2 վերշոկ երկայնութեամբ, նրա ցածի ծայրի կողմից տաշում են մի կողմի կէսը շեղ այնպէս, որ շտի կիսիցը աստիճանաբար խոր տաշելով ծայրը սուր լինի, իսկ միւս — չըտաշած, կողմի կեղել վրան մնայ. կըտրած բնի վրայ 2—3 տեղ կեղել ետ տալ համաձայն պատրաստած շիւի մեծութեան, մի քիչ էլ բնիցն կտրել ու շիւը սուր ծայրով զգուշութեամբ խրել այս կտրուածքի մէջ, կեղել վրայ բերել, լաւ փաթաթել ու բնի գլուխը ծածկել սպեղանիով. որա ապագայ խնամքը միւս պատուաստների նման է անելու: (Նկ. № 9)

Գետնապատրիս: Այսպէս է կոչւում պատուաստի այն տեսակը, որ անցնում է թթենու բնի ամենացածի կող-




Նկ. № 9
Կեղել տակի պատուաստ:

շութեամբ շարժելով հանել բնափայտից, իսկ կտրած պատուաստացու ոստի կեղելը չորս տեղից նրա երկայնութեամբ խողովակի մեծութեան համեմատ գծել, կեղելը ետ տալ ու խողովակը վլարայ վերաբեր ծածկել լինապէս որ աչքերը չը ծածկուեն և յիսոյ փաթաթել ու ինսմել այնպէս ինչպէս որ անւում է աչքապատրիսը: (Նկ. № 8)

Այս տեսակ պատուաստը շատ ընդունուած և գործազրւում է Բագւայ նահանգում. թէ և այստեղ էլ յաջող է անցնում, բայց, ինչպէս յիշեցինք, փորձառու հեղինակաւորները աչքապատրիսը միշտ աւելի ապահով և գերազանցի են անակն են համարում:


թը. զրա համար ծառի արմատավզից հողը ետ են տալիս, բունը շեղ կտրում, մատներով մնացած բնի կեղելը այնքան սեղմում են, որ նա բնափայտից բաժանուում է. վերցնում են ազնուացեղ թթենու երկու աչքանի մի բարակ ոստ՝ (2—3 վերշոկ երկայնութեան) ցածի ծայրը շեղ կտրում ու խրում են արդէն պատրաստի բնափայտի և կեղելի արանքը. ոստի շեղ կտրածի հակառակ կողմի կեղելի վերնամաշկը պէտք է թոյլ քերել, որ բացւի կեղելի տակ խոր պէտք է խրել. ճիլորի թելով պատրաստը փաթաթել ու արմատավիզը ծածկել հողով, մինչև պատրիսաչքը, յիստապայ խնամքը միւս պատուաստների նման է: (Նկ. № 10)



Նկ. № 10

Գետնապատրիս
(Ճեղ գծերը ցոյց են տալիս թէ աւելորդ ոստերը նրանիցը պէտք է կտրել):
Այսպիսի պատուաստը շատ է ընդհանրացած Իտալիայում և Ֆրանսիայում

Առաջին տարուայ արած պատուաստների խնամքը: Նոր արած պատուաստների վրա առաջին տարին անհրաժեշտ է լաւ խնամք տանել. ամառուայ ընթացքում ծառի վիզը մի բանի անգամ լցնել. օգոստոսին ծառերի տակը լաւ փորել, բնի վրայ բռնած անպէտք ոստերը (հարամիք) մոքել — թափել ու միայն ծլած աղնուացեղ ոստերը պահել-պահնել ամեն տեսակ պատրական փորձանքներից:



Նկ. № 11

Պատուաստը յաջող գուրս եկած ու կապած հին բնից:
(Շեղ սև զիծը աւելորդ բունը կըտ բարդուից, թիզուց, թզկուց, խաբելու տեղն է ցոյց տալիս):
Կացիայից, կազնուց, ֆնուղենուց, հացինուց, հաճարից, լորենուց, դաշտախոսերից, կարմիր երեքնուկից և առևյուից:
Տերեկի բաղադրեալ քիմիական մասերի չափն ու քանակը փոփոխական է՝ նայելով տարուայ հղանակին և ծառի տեսակին, տեղի դիրքին և այլն:

Զանազան յատկութիւնները:

Թթենու տերեկի բաղադրիչ մասերը արեկ լոյսից, տաքից, ստուերից միշտ մի և նոյն չափի չեն մնում, նոյնպէս էլ փոխուում են ծառի վրայ եղածը, քաղածը, խոնաւ կամ չոր հղանակից,

Առասարակ ամեն տեսակ պատուաստ անելիս պէտք է հին բնից 4—6 վերջոկ պահել, որ աճած ազնիւ ոստը նրանից կապուի. յաջորդ տարին, երբ պատուաստը լաւ ամրացած-դարդացած կինի, հին ոստը պատուաստի մօտից շեղ դէպի գուրսը կըտորել ու կտրուածքը ծածկել սպեղանիով։ (Նկ. № 11)
Թարմ տերեկի բաղադրիչ մասերը,

Նրա 1000 մասից 850-ը ջուր է և միայն 150-ը կարծը։

Քիմիական հետազոտութեամբ յայնուել է, որ թթենու տերեկը ունի՝	բարմի ջորացրածի ջուր	63,02	—
հանքային նիւթ. 4,61		10,98	
ճարպ'	1.73	4,12	
ազոտ. նիւթից՝	6,05	16,33	
անազոտային և մզուկային նիւթեր՝			
	20,87	49,64	
ցանցանիւթեր՝	2,91	6,93.	
Թթի տերեկ ճարպով աղքատ է դողի վազից իսկ հարուստ է ա- կացիայից, կազնուց, ֆնուղենուց, հացինուց, հաճարից, լորե- նուց, դաշտախոսերից, կարմիր երեքնուկից և առևյուից:			

Տերեկի բաղադրեալ քիմիական մասերի չափն ու քանակը փոփոխական է՝ նայելով տարուայ հղանակին և ծառի տեսակին, տեղի դիրքին և այլն։

քաղած տերեկը լոյս տեղ է փռուած թէ մութ, ծածկած է երեսը թէ բաց, շարունակ փռփոխութեան է ենթարկում, ըստ չայնմ էլ շատ կամ քիչ աղդում է այդ փռփոխութիւնը շերամի կազմուածքի և թելի հինուածքի վրայ։

Վերցնենք հէնց ազօտի մասը. Օ. Կ. Ստախովսկու հետազոտութիւնով երեացել է.

Սեպ. 14-ին մինչեւ արեկ ծագելը $1,57\%$

ժամը 2-ին (պարզ օրուայ) 156%

երեկոյեան՝ արեկ մասելուց յետոյ 1, 50%

» 19-ին առաւօտը մինչեւ արեկ ծագելը 1, 50%

ժամը 2-ին՝ 1, 59%

երեկոյեան՝ 1, 66%

Սեպտ. 39-ին առաւօտը՝ 1, 53%

ժամը 2-ին՝ 1, 58%

երեկոյին՝ 1, 54%

Լոյսի և մութի մէջ պահած տերեների բաղադրիչ մասերից վերցնենք դարձեալ ազօտը:

Մինչեւ մութ ընկնելը՝ 1, 67%

22 ժամ մթնում մնացածը՝ 1, 73%

նոյն օրւայ առաւօտը՝ 1, 66%

կէսօրւայ ժամը 2-ին՝ 1, 60%

երեկնադէմ՝ 1, 69%

Աւելորդ չէ յիշել պրօֆ. Կվայեատի ցուցմունքը՝ թէ տերեկի սննդարարութեան չափը չի կարելի որոշել նրա մէջ եղած ազօտի քանակով, որովհետեւ նրա քանակին համապատասխան չնն լինում ոչ բօժօժի որակը և ոչ շերամի որդի կեանքի տեսողութիւնը։

Տերամի կեր թթենի:

Տերամի որդերին կերակրելու համար աւելի ձեռնտու է հասարակ չպատուաստած (ջըռ) ծառի տերեկ տալ, բան պատուաստածինը. հետազոտութիւնով հաստատուած է, որ 1 փունտ բօժօժ ստանալու համար պէտք է որդին տալ $9 \frac{3}{4}$ փունտ տերեկ. բացի այս, չպատուաստած տերեկով կերակրած որդի հինած բօժօժը աւելի ամուր ու ծանր է լինում ու տուած թելն էլ առատ, հետեւարար և աւելի արդիւնաւոր է. Սա հաստատուած է բազմաթիւ մտանագէտ շերամապահներից (Դօնդօլ, Բօնաֆու, պրօֆեսոր Կվայեատ և ուրիշները):

Տերեւը իբրև զերամի կեր տարուայ ամիսներում մի և նոյն

յատկութեան չէ մնում. ուրիշ է նա գարնանը և ուրիշ աշնանը: Օ- քինակ, վերցնենք նրա մէջ եղած ջրի, ազոտի և մոխրի քանակը հոկտ.	68,08%	1,04%	3,30%
մայիս:	74,63%	1,35%	2,28%
սեպ. վերջին:	60,06%	1,75%	4,99%

Այս հետազօտութիւնը վերաբերում է ըլպատուաստած ջըռ
թութիւ տերենին, որա նման էլ փոփոխուում են թթի միւս տեսակ-
ների տերեների բաղադրիչ մասերը:

Թթենու տերենը շերամի երկրորդ բերքի համար եղած փոր-
ձերը անյաջող են զուրս եկել ու սա բնական երևոյթ է: Որդի
զարթները և թթենու տերեւ արձակերը բնութեան մէջ միաժամա-
նակ են կատարուում. նորածիլ տերեների բաղադրիչ մասերը այն
քանակով և զօրութիւնով են լինում, որ տերեների մեծանաւ-
լու հետ մեծացող շերամի որդերի ստամոքսի կազմուած-
քին համապատասխան լինեն. մեծացող տերեների մէջ
քիմիական բաղադրիչ մասերի հետզ-հետէ շատանալը և փո-
փոխութիւր ու թէ կերի և թէ ուտողի մէջ համաչափութիւնը պահ-
պանուում է մինչև որդի լինալը—արբուն հասակի հասնելը, որից
յետոյ սկսում է բօժօժի հինուածքը և ձու ածելը:

Եթէ այդ նոր ածած ձուերը—սերմը, զարթեցները ու սկը-
սենք կերակրել, նոյն ելքը չենք ստանայ, որովհետեւ տերեւ կոշ-
տացել այսինքն նրա բաղադրեալ մասերը այլ ես այն չեն, ինչ
որ էին ծառի ճմիւուայ 4—5 ամիս հանգիստ աւանելուց յետոյ
արթնացած տերեխնր. յուլիսին ծառի հիւթի քանակը և որակը
բոլորովին այլ են և չեն կարող նպաստաւոր լինել սերմից նոր
դուրս եկած որդի կազմուածքին, որով և սպասած բերքը չենք
կարող ստանալ. իսկ եթէ փորձի համար պահելու լինինը (ինչ-
պէս պահել են շատ հետաքրքրուողներ), կստանանք թոյլ ու
նուազ որդեր և եթէ սրանց յաջողուի բօժօժ հինեւ եղած թերը
շատ թոյլ կլինի ու սակաւ, իսկ բօժօժն էլ բարակ—գրեթէ թա-
փանցիկ:

Տնկարանները:

Թթենու տնկարանները լինելու են արեակող, քամիներից
պաշտպանուած և լաւ մշակուած հողում, որը բացի 10 վերշով
լուր փորելուց, պէտք է լաւ էլ պարարտացրած լինի. ի նկատի
պէտք է անպատճառ առնել, որ թթենու տնկարանի հողը պէտք
է օրվանական մարմիններից և խոտարմատնիրից ազատ լինի:

ապա թէ ոչ սրանք փթելով հեշտութեամբ կարող են իրենց ցա-
ռով վարակել մատղազ թթենիների արմատներին:

Կանոնաւոր տնկարան ունենալու համար հողաբաժինը հաւա-
սարաչափ կտրատելու է քառակուսիների, 18 վերշով կողերով. ամեն
քառակուսու անկիւնում տնկելու է մի ծառ. մէկ քառակուսի սա-
մէնի վրայ 9 ծառ. իսկ եթէ տնկիր շատ լինին բայց հողաբաժի-
նը ըիչ, կարելի է քառակուսիքը անել 12—16 վերշով. այսպիսի
տնկարանում ծառերը կարելի է պահել—կրթել մինչև 3 տարի,
որից յետոյ պէտք է հանել—ծախելու և կամ իր մշտական տե-
ղում տնկելու համար:

Եթէ 3 տարեկան տունկը ըստ ամենայնի առողջ և զուարթ
է, կարելի է այդպիսին թողնել տերեացու. իսկ եթէ անկանոն է
աճել ու թոյլ է, պէտք է պատուաստել: Տնկիքը տնկելու է, երբ
արեսու ու պարզ օր լինի:


Ներամի համար բբենու տնկարանները անպ ատճառ արեակող
և անստուեր տեղերում պէտք է շինել, անկիւները իրարից 1; 2 և
կամ 3 արշին հեռու կապած թումբերում տնկել. ամեն տարի
զրա ատկի հաղը փորել—փափկացնել ու 2 տարին մի անգամ
պարարտցնել:

Կան տեղեր, որ այս նպատակով թթենիքը շատ խիտ են լի-
նում տնկուած—երբեմն իրարից 4—6 վերշով հեռու (գուցէ հողի
սակաւութիւնն է ստիպել այդպէս անել). այսպիսի տնկարաննե-
րից չի կարելի շատ արդիւնք սպասել. նախ՝ որ դրանց տակի հո-
գը դժուար կլինի մշակել, երկրորդ՝ որ ծառի բները խիտ լինե-
լով իրար վրայ ստուեր կարձակեն, ոստերը չեն կարող արեի
տարելից և լոյսից կատարեկապէս օգտուել, ուստի ոստերը կմնան
նուազ, կարճ, իսկ տերենները՝ փոքր և սակաւ, երբորդ՝ որ ար-
մատները իրար մօտ լինելով չպիտի կարողանան բաւականաչափ
մնունդ ստանալ հողից և չորրորդ, որ եթէ այսպիսի տնկարանում
մի ծառի արմատը տկարանայ սպիտակ բորբոսացաւով, շատ
կարճ ժամանակում կըվարակուեն նրանով տնկար անի բոլոր ծա-
ռերը:

Կան տեղեր, որ շերամ պահելու համար ծառերը լինում են շատ
բարձր (ինչպէս թութայիսի նահանգումն է), գրա անյարմարու-
թիւնն այն է, որ այդպիսիներից տերեւ ստանալը դժուար է լի-
նում: (Նկ. № 12)

Կան տեղեր, որ տնկարանները շատ ցած բներով են պահում
և տերեւատու ոստերը գետնին մօտ են լինում, որա անյարմա-

բութիւնն էլ այն է, որ թթենու տերևները շատ դիւրազգած լինելով
սուաւոտեան ցըտից կարող են խորշակահար լինել ու




Նկ. № 12

Տերե ստանալու թթենք

փշանալ. իսկ եթէ բունը բարձր լինի, այս չարեքից նրանք դերձ կմնան:

Պտղատու բրենուց եթէ ուզենանք շերամի համար տերևա-
տու ծառ պատրաստել, պէտք է նրա վրայ երկու տարի աշխա-
տել:

Եթէ նրանք շատ խիտ են բուսած, հարկաւոր է նոորացներ,
այն է՝ մէջ առ մէջ արմատահան անել տակի հողը լաւ փորել-փուխ-
րացնել, ժանդակ խոտերը մաքրել, բնից կամ արմատներից բու-
սած երկրորդական սստերը մաքրել ու բունը աղափ պահել: Այս
նախապատրաստութիւնը անելուց յետոյ, հէնց այդ առաջին տա-
րին փետրուարին կամ մարտին, նայած տեղական կլիմային,
կտրատել ծառի վերնամասի 2—3 տարեկան ճղները՝ իսկ երկ-
րորդ տարին, հէնց նոյն ամիսներին, կտրել գլխաւոր ճղները.
Բնի վրայ $\frac{3}{4}$ —1 արշին երկարութիւն թողնելով ու բոլոր կըտ-
րուածները սպեղանիով լաւ ծածկել: Այսպիսի ծառերը այսուհետեւ
շերամի համար կտան շարունակարար պատռական և առատ
տերե: Նկ. (№ 13)



Զկարուած

ա. տարուայ
կտրուած.

բ. տարուայ
կտրուած.

Նկ. № 13

Իսկ եթէ ծառի վերնամասը միտնգամից, հէնց առաջին տա-
րին, կտրատենք, նրա միջի առատ հիւթը (մանաւանդ եթէ ծառը
ուժեղ է և ասող) չկարողանալով սպառւել տերևների և ճղների
վրայ, բանի որ չկան, պիտի բնակայտից զուրս թափուեն ու
ծառին հիւանդացնեն, բայց եթէ վերնամասը 2 տարում կտրենք,
նրան մեր ուզած ձև տալու համար, զրանով մենք հիւթի հո-
սանքը զսպած և չափաւորած կլինենք ու ծառը պիտանացու կմնայ
յետագայ տարիների համար:

Խոնաւ տեղում տնկարան ու նենայու կերպը, կան այնպիսի
խոնաւ տեղեր էլ, չընայելով որ ստորերկրեայ ջուրը շատ խորը
չէ, սակայն պարապում են թթենու մշակութեամբ: Բանի որ թը-
թենու արմատները ջրի մերձակայութիւնից կարող են վնասուել,
զրա համար էլ նրա տնկելու տեղի հողը բարձրացնում, թումբեր
են շինում ու նրանց վրայ անկում: Այսպիսի տնկարանի տեղը
լինելու է թեք, զէպի զառի վայրի երկայնութեանը փորելու է
հաւասար լայնութեան առուներ: 3 արշին լայն և $1\frac{1}{2}$ —2 արշին
խոր. այս առուների միջի տարածութիւնը թողնելու է 6 արշին,
փորուած հողը երկու կողմից լցնելով այդ տարածութեան վրայ,
կդառնայ կիսակլոր մակերեսոյթով թումբ, որի վրայ էլ 9 արշին
երարից հեռու տնկել ծառերը, սրանք շատ յաջող կարող են զար-
գանալ ու բերը տալ:

Կարելի է առուները նոյն խորութեամբ աւելի նեղ անել ու
ծածկել սալարարով, այնպէս որ ջուրը կարողանայ աղատ հոսել,
հետևանքը նոյնը կլինի:

Պտղի համար սնկարան: Եթէ պտուղ սաանալու համար են ուզում ծառեր ունենալ, պէտք է տնկիները իրարից 12 արշին հեռու տնկուել, դրանց տակի հողը ամեն տարի փորել ու երկու տարին մի անգամ լաւ պարարտացնել:


Այս եղանակով խնամուած թթենիքը թէ առողջ կլինեն և թէ առուած տերեւ կամ պտուղը կլինեն խոշոր, ազնիւ և առաս:

Տերեւատու ցածրադիրը տնկարան ունենալու համար ծառերը պէտք է տնկուել նոյն եղանակով, ինչպէս վերը յիշեցինք, միայն թէ սրա համար տնկիքը պէտք է սղոցել գետնից 3—4վերշոկ բարձր, արդ կարճ բնից կարձակուեն միշտ առատ ու գուարի տերեւատու սստեր: Եթէ ուղենանք սրանցից մի ըուն միայն ունենալ, պէտք է լաւ սստերից մէկը պահել, իսկ միւսները կըտրաստել: Այս ձեւ տնկարանի լաւութիւնը այն է, որ հեշտ է լինում նրանից տերեւ ժողովելը:

Ցածրագիրը տնկիները եթէ մի կողմից պաշտպանուած լինին բարձր պատով, սրանք միւս թթենիներից 5—10 օրով առաջ կըբացուին ու պէտք կըդան շուտ զարթնող շերամի որդերին կերակրելու:

Կանաչ ցանկապատ կարելի է կազմել շերամի համար տերեւ տուող «ջլու» թթենիներից, արտի, արգու կամ կալուածքի շուրջը պէտք է 1 ½ արշին խոր և 2 արշին լայն առու փորել ու հողը ձգել կալուածքի կողմը, հէնց այդ հողաթումքը հարթացնել, երեւ կարգ, մի-մի արշին իրարից հեռու, սաթրինջի (շախմատի) ձեռվ, և թթենիքը անկուտել, երկրորդ տարին տնկիների գլխները, հողից 1 ½—2 արշին բարձր, միահաւասար չափով, կտրատել, նոյնը կըկնել ամեն տարի, գլխների բարձրութիւնը հաւատարաչափ պահել, վրայ երրորդ տարին այս տնկիքը կարձակեն իրանց բըներից բազմաթիւ սստեր, որոնք իրար խճճուելով անանցանելի պատճէշ կըդառնան: (Նկ. № 14)

Սնանց արդիւնաւէտ պահելու համար պէտք է հողը ամեն տարի փորել ու ժանգալ խոտերից աղատել, իսկ շերամին կերակրելու տերեւ ստանալու համար պէտք է ցանկի դրսի և ներսի կողմերը խուզել, բայց միջի սստերին ձեռք չտալ: Եթէ 5—6 տարի շարունակ ցանկապատի գլխները խուզելուց անկիների վերի մասը զգալի կերպով մացառակալեն և տգեղանան, պէտք է այդ



Նկ. № 14

Թթենիներից կանաչ ցանկապատ:

մացառատեղից ցածր բուլորովին սղոցել, սրանով ծառերը թէ կը գեղեցկանան և թէ կըթարմանան:

Հին ծառի վերանորոգումն:

Շերամի կամ պտղի համար ունեցած թթենիքը եթէ յոզնենած հերանան, տուած տերեւ բիչ ու նուազ կլինի, իսկ պտուղը՝ սակաւ, մանր ու անհամ. սրանցից պարզ երկում է, որ ծառը յոզնած է, ուրեմն պէտք է նրան վերանորոգել:

Շերամի տերեւ տուող ծառերի ճները ամեն տարի կտրելով ծառի զլուխը հաստանում—խութակալում է, իսկ եթէ կտրուածքը անհմուտ բանուոր է արել կամ գուլ զանակով է կատարել գործը, ծառի վերի մասը սկանում ու ճեղքում է ու բնի այդ մասում պատ տեղ չի լինի նոր սստի համար աչքեր գոյանալու, որով ծառի հիւթի շարժումը իր կանոնաւոր ընթացքից կըշեղուի ու ծառը կենթարկուի զանազան հիւանդութիւնների, որից կարող է նա չըրանալ. դրանից աղատ պահելու համար պէտք է հնացած կամ թուլացած ծառի բնից բարձր, ճները տակից, սղոցել սրանով յոզնած ու դակացած ծառը վերակենդանալով սկսում է


գրեթէ նոր կեանքով ապրել, շուտով արձակում է առողջ ու բազմաթիւ սոստեր՝ լի տերեներով, իսկ պտղատու ծառերը վերանորոգուելով տուած պտուղն էլ լինում է խոշոր, համեղ ու առատ:

Ձեւաւոր կամ գեղատեսիլ ծառեր:

(Формовка, La taille des arbres)

Ամեն մի մատղաշ ծառ, լինի նա պտղատու թէ անպտուզ, կարելի է կարատելով՝ խուզելով կամ ցցերին կապելով տալ նրան ինչ ձեւ որ կամենանք. կարելի է շինել բրդածե, կոնածե, գընդածե, կամար, փունջ, ուղղահայեց պատ և այլն. այդպիսի ձեւերի հեղտութեամբ ենթարկում է նաև թթենու տունկը, քանի որ սրա մատղաշ սոստերը տեղի է հիւթալի, ճկուն և պատահարների դիմացկուն են:

Առհասարակ Յ տարեկան թթենու տնկին ունենում է իր բնի գլխին Յ ճիւղ, սրանց կարելի է կտրատել և ծառին տալ ուղած ձեր. այս երեք ձղների աճելու կանոնաւորութիւնը արգիւլում է, եթէ տնկու եղած տեղում փչում են շարունակ և ուժեղ քամիներ, այս գէպքում ծառի գլխին ուղած ձեր չի կարելի տալ, որովհետև քամին նրանց ծռում-թիքում է իր հոսանքի ուղղութեամբ, որով հարկ է լինում հաստատուն ցիցերով ծառի բունք ուղղացնել, իսկ գլխի երեք ձղներին մի օղակ անցնել և իրարից համաչափ հեռաւորութեամբ կապել:



Նկ. № 15

Սոստերը կապելու ձեր,

Կարելի է ծառին տալ շատ գեղատեսիլ ձեր. միայն անհետու է այդ համբերութեամբ և զդուշութեամբ: Շատ ծուռ սոստերը ժողովիւու, իրար մօտացնելու կամ ուղած ձերին յարմարացնելու համար եթէ տնկու վերնամասը Յ սոստանի է, կարելի է օղակի մէջ առնել ու կապել, իսկ եթէ երկու սոստանի է, կարելի է չուանով կապել, միայն թէ կապելատեղը, երկու գէպքերումն էլ, սոստերի վրայ թաղիք, փալաս կամ հէնց ծառի կեղկ գներ, որ չուանը քառուց կեղեին չը հարհարի կամ թէ նրա մէջ չմտնի: (Նկ. № 15)

Պարտիզի շուրջը ցածրադիր հորիզոնական ցանկ կամ թէ աւղանայեաց ցանցա-ցանկ ունենալու համար թթենիքը պէտք է հողից 2—3 վերջոկ վեր կտրատել. հէնց այդ կարճ բնից դուրս կդան սոստեր, որոնցից ընտրելու է պէտք ական և հանդիպակի բուսած սոստերը. նրանց կապելով ցցերի կամ երկաթաթելերի, յարմարացնել ուղած ձերին, իսկ մնացեալ աւելորդ, ուրեմն և անպէտք, սոստերը կտրել-թափել ու վէրքերը ծածկել յասուկ սրա համար շինած էժանագին սպեղանիով, որն է՝

1 մաս փոշիացրած կաւիճ,

1 մաս ոխրա,


1 մաս կուահատի եփած ձէթ

1 պտղունց անգիպական մուր (օճակ)

սրանք բոլորը խառնել, լաւ հարել ու քսել ծառի վէրքերին:


Կարելի է պատրաստել և աւելի թանգ, բայց լաւ սպեղանի՝ Յ մաս կանիփոլ, 1 մաս մեղրամու և մի քիչ էլ ճարպ (մօտաւորապէս մէկ ու կէս մաս, սրանց միասին հալել, լաւ խառնել, յետոյ լցնել մի քիչ սկիպիտար ու սպիրտ ու այնքան խառնել, մինչեւ որ ստացուի մի տեսակ մածուցիք զանդուած ու քսել վիրաւոր սոստիկները: Լաւ է նոյնպէս և Մէնտէլէի յատուկ պատրաստած սպեղանին:

Զեաւոր— գեղատեսիլ ծառեր պատրաստելու արհեստը (ինչպէս ուրիշ պտղատու նոյնպէս և թթենիք) գեռ ևս մեղ մօտ, Անդրկովկասում, շատ տարածուած չէ, գրեթէ պահանջ չկայ. դրա համար էլ այդ ճիւղի պարտիզան-վարպետներ չկան, որ գործը ընդհանրացնեն. իսկ անհմուտ մէկը որ ուղնայ ինքնակրթութեամբ պատրաստել այդպիսի ծառեր, կարող է կորցնել զրա վրայ շամանակ ու փչացնել շատ տնկիներ: (Նկ. № 16 և 17)



Նկ. № 16

Զեաւոր ցանցա-ցանկ:



Նկ. № 15

Զեաւոր շեղացանց ցանկ:

Շահագործումն:

Թթենու տուած օգուտները շաս են. նըանով կերակրում են շերամի որդերը. թթենին, նայելով իրաւարիքին և տուցած խընամքին, տալիս է շերամի համար պէտքական տերեւ։					
1 տարեկանը՝ մինչև $2\frac{1}{4}$ ֆ	12 տարեկանը՝ մինչև	174	»		
2 » 6 » 13 » » 187 »					
3 » 8 » 14 » » 194 »					
4 » 28 » 15 » » 211 »					
5 » 44 » 16 » » 221 »					
6 » 64 » 17 » » 229 »					
7 » 81 » 18 » » 235 »					
8 » 106 » 19 » » 243 »					
9 » 120 » 20 » » 245 »					
10 » 152 » 21 » » 247 »					
11 » 161 » 22 » » 250 »					

Ցուրտ երկրի թթենու տերեւը աւելի սակաւ է լինում։ Անամնոց կիրակուր են լինում ինչպէս թթենու մատղաղ թարմ ոստերը և տերեւը, նոյնպէս և աշնան թափուած տերեւը, որը տերեւաթափին ժողովում և պահում են ձմեռուայ գործածութեան համար։

Լաւ ներկ է ստացւում աշնանը թափուած դեղնած տերեւից. նրան ժողովում, լաւ հփում են, մի ուրիշ պղինձում էլ շիբն են եփում. ներկերու կտորը նախ շբաջրում են թաթախում, թողնելով նրա մէջ 4—5 րոպէ, յետոյ տերեւաջրումն երեք անդամ թաթախում. ներկերիս պէտք է տերեւաջրուրը եռ զայ, կտորը կստանայ դեղին ոսկեգոյն, փոելու է նրան ստուեր տեղում որ չորանայ։

Պայի զահաւետուրինը, թթենու պառուղը միանգամից չի համում այլ հետզ հետէ և տեսում է մինչև $2\frac{1}{2}$ ամիս. նայելով ծառի հասակին, ծառը կտոյ 1—12 փութ պառուղ. նրա տեղական գնին նայած լատ այնմ էլ կարելի է շահուել։

Թարմ թրի հիւրի բաղադրեալ մասերն են. խառ-թութ Սպիտակ անկորիկ թութ 83,38 %

Զուր 76,74 % 11,56 »

Դիւկօզ 18,77 » 0,33 »

Եղեգնաշաքար 1,28 » 0,073 »

Ազօտ 0,084 » 1,47 »

Խնձորաթթւուտ 0,41 » 2,11 »

Անագօտային և մզուկային նիւթեր 1,86 » 0,656 »

Մոխիր 0,596 »

Թոյլ-սեղմիչով քամած—հանած սպիտակ թթի հիւթի լինում

Թոյլ-սեղմիչով քամած—հանած սպիտակ թթի հիւթի լինում է աւելի ջրալի ու թթուաշ. Սպիտակի խառ թութի հիւթի լինում է աւելի ջրալի ու թթուաշ. Սպիտակի խառ թութի հիւթի մէջ 18,77% հիւթի մէջ եղած բաղադրիչ մասերից խաղողաշաքար կայ 18,77% հիւթի մէջ կարմիր թութի հիւթի մէջ 11,56% Բացի այս, ինչպէս իսկ կարմիր թութի հիւթի մէջ կայ նշանակուած է վերի ցուցակում, սպիտակ թթի հիւթի մէջ կայ միայն 1,28% եղեգնաշաքար, մինչդեռ կարմիր թթի հիւթի սէջ կայ միայն 0,33%. Սպիտակի հիւթը հարուստ է կարմիրից անագօտային և մզուկային բաղադրութիւններով, սպիտակուցային նիւթերով մզուկային էաւասար են, նոյնպէս էլ շատ չեն տարրերում մոխիրի գրեթէ հաւասար են, նոյնպէս էլ շատ չեն տարրերում մոխիրը չափովը։

Մոխիրի մէջ որոշ չափերով կան կիր, մագնեզիա և թթուատներ. 100 մաս սպիտակ թութի հիւթում կայ երկաթի թթուատներ. 100 մաս սպիտակ թութի հիւթում կայ երկաթի մոխիրում կայ 3,93%, իսկ նոյնքան կարմիր (խառ) թթի հիւթի մոխիրում կայ 6,32% երկաթաթթւուտ. հաւասական է, որ հէսց երկաթի այս առաւելութիւնն է, որ խառ-թութի հիւթը բուժիչ յատկութիւն ունի և ելութիւնն է, որ խառ-թութի հիւթը բուժիչ յատկութիւն ունի 1,40% երկաթաթթւուտ, իսկ

Խնձորի հիւթի մոխիրը ունի 5,89%։

Թթի պատի ջաքարի քանակը՝ ըստ այրօմետրի, հաշուած է

22,2—28,9%, իսկ քիմիական հետազոտութեամբ—14,3—22,4%,

բացի մզուկային նիւթերից։

Ոգու (սպիտի) քանակը. 1 փութ պառուղից 6,30 գրադուս է

սպիտ է ստացւում. միջին թութ մի ծառը տալիս է 5—12 ֆ.

սպիտ է ստացւում. միջին թութ մի ծառը տալիս է գրադուսը $8\frac{1}{4}$ —11կ.

պառուղ կամ 31,5—75,6% սպիտ. ծառը տալիս է գրադուսը գուտ օգուտ կը ընայ ծախսերը և աքցիզը դուրս գալով տիրով գուտ օգուտ կը ընայ ամեն մի գրադուսին $3\frac{1}{4}$ —5 կոպէ։

Թթից քաղցրահամ ոգելի խմիջը (բալիվկա, լիկեր) պատրաստելու համար վերցնել կէս վերցրո լաւ հասած ընտիր թութու լցնել մի կաւէ կճռւճի մէջ ու փայտէ դգալով լաւ տրորել, լցնել դրա վրայ $\frac{1}{4}$ վերջ զինու սպիրտ, լաւ խառնել, կճռւճի բերանը ծածկել ու թողնել հանգստանալու 6—8 օր, յետոյ մաքուր քաթանէ քսակով քամել մաքուր ամանի մէջ, աւելացնել $\frac{1}{4}$ վերջ. եփ ոռուած—սառեցրած ջուր, 11—12 ֆ. լաւ ծհծած շաքար, հեթէ հեղուկը պղորոր լինի, նորից քաթանի քսակով անցկացնել՝ լաւ հոտի և համար կարելի է ձգել դրա մէջ քիչ մեխակ և կիսամոն (դարչին), լցնել շիշերի մէջ ու գործածել:

Թթի հասած պտղից շինում են նոյնպէս զինի և քացախ: Գինի շինելու համար վերցնելու է ոչ շատ հասած լայց ընտիր և առողջ պատուղները. նրանց գուլ ջրով լաւ լուանալուց յետոյ ճշմարել-հիւթը հանել որի համար եթէ շատ է, գործածել խաղող սեղմող պղէսը, խակ եթէ քիչ է, կարելի է լցնել թանդիֆում ու սեղմել ձեռքերով. տակի քուսպի վրայ լցնել քիչ գոլ ջուր. երկու ժամ թողնելուց յետոյ նորից սեղմել ու ստացած հիւթը լցնել առաջուայ հիւթի վրայ. յետոյ, ամեն 0,08 մեղրոյի (1 լիտր— $2\frac{1}{2}$ փունտ կամ 1000 գրամմ) հիւթին աւելացնել 1 $\frac{1}{2}$ ֆ. շաքար ու եփ տալ $\frac{1}{4}$ ժամ: Երբ հեղուկը սառի, ամեն 10 լիտրին (0,81 վերջը) աւելացնել 0,3 լիտր (0,924 վերջը) զինու սպիրտ և 1 լոտ կարմիր գինու քար, $\frac{3}{4}$ մսխալ դարչին $\frac{3}{8}$ մսխալ ծհծած դառը նուշ, սրանք լաւ խառնելով թողնել որ ինքն իրեն եռ գայ. դրա համար գինելու է այնպիսի սենեակում՝ ուր տաքութիւնը մշտապէս լինի 12—14 Ռ. ամենի բերանը ծածկելու է թանդիֆով:

Երկու օրը մի անգամ ամանը նայել, եթէ պակասել է եփ եկող շիշէն, գլուխը լցնել շաքարաջուր (1 լիտր ջրում լուծել $\frac{1}{2}$ ֆ. շաքար). և երր այլիս նոր շաքարաջուր աւելացնելու կուրեք չլինի, ամանի բերանը պինդ ծածկել ու միայն երկու շաքարից յետոյ զգուշութեամբ լցնել ուրիշ ամանի մէջ ու դնել նոյն սենեակում: Վեց ամսից յետոյ զինին արդէն պատրաստ կլինի, պէտք է լաւ գտել—պարզացնել ու լցնելով սովորական շիշերում լցանով բերանները ամուր գոցել ու պարկացնել նկուղում:

Գինին զտում են կամ ձուի սպիտակուցով (10—15 ձու) լամ հասարակ սոսինձով. վերցնել սրանից .7 մսխալ, լուծել $\frac{1}{2}$ լիտր (0,04 վերջը) զինու մէջ ու թոյլ կրակի վրայ աաքացնել. լուծուած սոսինձը շաքունակ խառնելով զինու ամանի մէջ, ամեն անմաքութիւն ամանի տակն են նստեցնում: Խցանները, եթէ

յուսալի չեն, պէտք է նրանց կնքամոմով (դմուռով) ծածկել, որ օդ չմտնի: (Թօմիլիսկի):

Քացախ հեշտ պատրաստելու համար վերցնել հասած սպիտակ թութը, լցնել մի կաւէ կարասի կամ կճռւճի մէջ ու դնել տակ թութը—արեի տակ 40—45 օր. այստեղ նա եռ կըդայ ու կըստացուի բաւական ուժեղ քացախ. սրան եթէ գտնես ու լցնենք շիշերի մէջ, բերանները լաւ պնդացնենք, շատ կդիմանայ, իսկ եթէ բերանները բաց կամ թոյլ պնդուած լինին, շուտ կիչանայ: Խառ-թթից պատրաստում են քաղցրաւենի, (մուրաբայ), լիրդախորտիկ (ժէլէ), ենկար կամ օշարակ:

Վերջինիս համար ընտիր պտղի հասածները լցնում են մի ապակէօծ կճռւճի մէջ, բերանը լաւ կապում ու հաց թխելուց յետոյ դնում են հսոցում կամ թոնքում. թութը լաւ եփում ու հիւթը գուրս է տալիս, առանց սեղմելու քամում են հիւթը—պարզացնում, լցնում շիշերի մէջ, խցանով բերանները պնդում ու գլխի վայր աւազի մէջ թաղում ու հետզ բանեցնում: Իսկ խառվայր աւազի մէջ թաղում ու հետզ բանեցնում: Իսկ խառթթից օշարակ ստանալու համար նրա հասած պատուղները սեղմում, հիւթը շաքարով եփում, քաթանով քամում ու լցնելով շիշերի մէջ պահում:

Սրան երբեմն ծախում են նուան օշարակի (նառ-շաբաթի) անդ էլ:

Բերմեզ-Պօշաբ շինելու համար լաւ ճմում են հասած պըտուղները, ստացած հիւթը եփում այնքան որ թանձրանայ ու թուկս գոյն ստանայ. 5 ֆ. պտղից ստացում է $1\frac{1}{2}$ ֆ. դօշար, շուկայում նրա արժէքը տատանում է փութը 1—3 ր:

Իսկ թթից պասեկ շինելու համար նոյն դօշարի ամեն մի փթին աւելացնել 10 ֆ. ցորենի ալիւր, և տալ մինչև լաւ թանձրանայ, հաւասարապէս լցնել մաքուր քաթանի վրայ ու դնել արևի սակ որ չորանայ. 10 ֆ. պտղից, ալիւրն էլ հետը, ստացում է 3 ֆ. չոր պասեկղ. փութը արժէ 3—4 ր:

Բուժիչ յատկութիւնները:

Թթենու պտուղը, արմատը, կեղիը և նեկտարը ղանազան հիւթանգութիւնների գէպքում շատ հին ժամանակներից բժիշկների խորհուրդով գործադուրել են. յայտնի են չոր թութը ների խորհուրդով (Fructus Mori recentes) կամ թարմ պտղի նեկտարը (Succus Mori):

Թթենու արմատը լործադրում է Եւրոպայում գլխաւորապէս արիւնհոսութեան (դիսենտերիա) դէմ. Հաբէշում՝ կաշու հիւանդութեան համար և այլն:

Խառ-թթի կեղեր ունի լուծողական և ստամոքսի միջի կլորորդեր թափելու յատկութիւններ. այս գեղը յայտնի էր զեռ ևս Քրիստոսից առաջ. Դրա համար կեղեր չորացնում, աղում—փոշի դարձնում ու քիչ ջրում խաշում, դրան խաշում են քիչ ձարխոտի (պարօտնութիւն, Filice mas) խաշած արմատի ջուր, զինու քար և փխողական քար:

Տորացրած բուրը սախական շուկայի լաւ ապրանք է. նրան Անդրկովկասում և ասխական այլ հրկրներում չորացնում են արեի տակ, բայց ընտիր և աղնիւ կիրնի նա, եթէ յատկապէս պտուղ չորացնելու հնոցում—կրակի տաքութիւնով չորացնուի. Թուրքիստանում չորացրած սպիտակ թուրթը սաներում ծեծում մանրացնում ու ստանում են մի տեսակ խիս, որը կորշագոյն է լինում, համեղ է նա ու սննդարար. այն տեղի լինարնակները ձմեռը, երբ քաղաքների հետ հաղորդակցութիւնը կտրում կամ զժուարանում է, ըստ մեծի մասին նրանով է սննում:

Թթենու փայտը միջակ կարծրութիւն ունի (ինչպէս է հացենին, չինարը, սպիտակ ակցիան և այլն), ճշոտ է ինչպէս կնձենին և սկացիան, չորացածը կորցնում է իր տրամագիծի 5—6 տոկոսը:

Մրա փայտը խոնաւութեան լաւ է դիմանում, լաւ յղկում ու կազմուածքի թելերը ուղղաձիգ լինելով հեշտութեամբ բարակ շերտերի է ճեղբարում—տախտակ դառնում. նա հիւաններից յարգւած է. ճլոտ լինելով նրանից պատրաստում են կառքի անիւր շրջանակներ (օօօլել), շառաւիզներ (ըսազ) և կասթի ուրիշ պատկանելիք. ամեն պէտք եղած մասերը ձևում ու թողնում են 2—3 տարի, որ կատարելապէս չորանան:

Դրա փայտից շինած տախտակներից (կլիօպկայ) պատրաստում են տակառներ, որոնց մէջ լցրած դիման օտարօտի տակառահամ չի ունենում:

Շինում են նոյնպէս նուռագարաններ՝ թառ, բամանչայ, սաղ և այլն. նոյնպէս պէտք է գալիս նա կամ կարասիքի համար:

Ծառի անպէտք ճղները ու ծուռ մասերը բանեցնում են իբր վառելափայտ, սրա չորը վառում է առանց ճայթիւնների, բոցը շատ է, իսկ ծուխը սակաւ. կրակը դիմացկուն է, մոխիրը թեթև. Դրա բազմաթիւ լաւ յատկութիւնների համար Եւրոպայի

շուկաներում սկսել են պահանջել թթենու հաստաբուն գերաններ թրենուց զինած ցիցերը՝ թէ վազերի և թէ տնկիների մօտ տնկելու համար շատ ընդունած է. նա իր դիմացկանութեամբ կաղնենուց ետ չի մնայ:

Եթէ ցցերի համար յատուկ տնկարաններ պահուին, բաւական շահ կարելի է ստանալ:

Թթենու մատղաց ոստերից կլապած կեղենը խուրձերով կապում, պահում, պէտք եղած ժամանակը թրջոց դնում ու նրանով կապոտում են վազերի մատնիրը:

Թթենուց թել: 1888 թուին խտալացի քիմիկոս Պասկվալիսը թրենու մատղաց կեղենից թել շինելու հնարը գտաւ. նա թէ պարզ թթենու մատղաց կեղենից թել շինելու հնարը գտաւ. նա մնաւած են յատուկ է և թէ շահաւէտ. իտալիայում այժմս հիմնուած են յատուկ է և թէ շահաւէտ. իտալիայում այժմս հիմնուած են դրա թելը, մանում և գորգործարաններ, ուր պատրաստում են դրա թելը, մանում և գորգործում են:

Թելացու մատղաց կեղենը հանում են թթի այն ոստերից, որոնց կտրում են նրա վրայի տերենները՝ շերամի որդին տալու համար. այդ չոփերը մեզ մօտ դէն են ձգում կամ վառում. ուրեմն մեզ մօտ անպէտք համարուած ոստերից գիտութեան և քիմիայի շնորհիւ արդիւնաբերութեան նոր գուռ է բացւում:

Այդ թելից գործած կտրը փայլուն է ու շատ դիմացկուն. 10 անգամ ամուր է բամբակի և 2 անգամ—մետաքսի թելերից:

Խառ-թթենու կեղենից և բնափայտից պատրաստում են հաստ ու բարակ թղթեր ու կարդոններ:

Ինի ու նըների գործադրութիւնը: Թթենին լաւ դիմացկուն կիրնելուն համար նրա գեղանները գործ են ածում իբրև նեցուկներ և սիւներ:



ՎԵՐՋԱԲԱՆ

Բոլոր վերոգրեալներից պարզ երևում է, որ թթենին օժառուած լինելով բազմաթիւ բարեմասնութիւններով, արժէ յուրջ կերպով պարապել նրա մշակութիւնով ու նրա տնկարաններով ծածկել ամեն մի բաց տեղ, եթէ միայն հնար կայ այնտեղ արնակել ու խնամել նրան:

Անտառապուրկ տեղերի համար թթենին միակ ձեռնուու, նըսպաստաւոր և օգտակար ծառն կարող է լինել. բաւական է նրան առաջին 2—3 տարին լաւ խնամել, այնուհետեւ իրենք իրենց կարող են պահել. Տերեւ՝ շերամի, պտուղը՝ անտեսութեան մէջ բազմատիսակ պէտքերի, կեղևը՝ թելի, թղթի կարդոնի, դեղի, փայտը՝ արհեստագործութեան, արմատը՝ բուժիչ յատկութեան համար է գործադրուում, իսկ սաղարթախիտ մեծ թթենին իր զով ստուերում պատստարան է տալիս քրտնավաստակ հողագործին կամ յոզնած ճանապարհորդին:

Թթենու գլխաւոր գերերից մէկն էլ բոշնապահերին իր տուած ծառայութիւնն է. հաւանոցում թթենի ունինալու օգուտըն այն է որ հաւերը թէ նրա պտղիցը կօգտուին ու թէ օրուայ տաք ժամերին նրա ստուերի տակը կարող են պաշտպանուել արեի կիզիչ ճառագայթներից:



Բ

ԹԹԵՆՈՒ ՀԻՒՑՆԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ՄԱԿԱԲՈՅՑ
ՆԵՐԸ ԵՒ ՎՆԱՍԱՑՈՒՆՆԵՐԸ

Թթենին շատ թէ քիչ վնասուում է ցրտերից, կարկտից, ստացած վերքերից, զանազան հիւանդուրիւններից, մակաբոյծ սունկերից, բոյսերից ու մի քանի կենդանիներից.

Ճրտից թթենին լստ մեծի մասին վնասուում է գարնան սառնամանիքներից, երբ կոկոնները բացուելիս յանկարծ եղանակուամանիքներից, իրք կոկոնների և նորածիլ ընձիւղների կը ցրտում է, որից կիսաբաց կոկոնների և նորածիլ ընձիւղների աճելը առ ժամանակ դադարում են կամ թէ մատղաշ ընձիւղները ցրտահար են լինում:

Պատահում է երբեմն էլ աշնանը՝ վաղահաս ցրտերից կամ թէ ճմեռը՝ շարունակ փչող չոր ու ցուրտ քամիներից, մատղաշ թըթենիների ոստերի ծայրերը կամ խակ մնացած բազմաթիւ ոստերը. թըթենիների ծայրերը կամ խակ մնացած բազմաթիւ ոստերը կամ այդ դէպքում պէտք է վնասուած մասը կամ այլը կտրատել և վէրքերը սպեղանիով ծածկել:

Վերջապէս ծառի բնի որևէ է մասի կեղևը եթէ պոկուած է և բնափայտը մերկ լինի, այդ մասը ցրտերի աղղեցութիւնից թըթենիների մեռնում և երբեմն էլ ճաքճաքը ու փթում են, որից կարող են վարակուել նաև բնի միջին մասերը:

Այսպիսի վնասուած տեղերից առհասարակ սկսում է արտաթորել մի հիւթ, որը ծառին շատ վնասաբեր է. այս չարկիք առաջը առնելու համար պէտք է միշտ հսկել ու բնափայտի վրայ որկիցէ պատճառով երեսող կեղևաղուրկ մասերը անմիջապէս ծածկել սպեղանիով:

Կարկուտը երբեմն բրի տնկարաններին ահագին հարուածներ է տալիս (ինչպէս եղաւ անցեալ 1910 թուի գարնանը Օրդուգաղում)

և նրա շրջակալքում), ջարդում է տերեները, մատղաշ սստերը, մինչև անգամ և ծառի կեղեն է կպչում, որով ծառը խապառ փըշանալու վիճակի է ենթարկւում: Այսպիսի դէպքում պէտք է սըզոցել-թափել շատ կամ բիչ վնասուած ոստերն ու ճղները, նոյն ինքն և բունք, եթէ նրա կեղեն էլ է վնասուել կարկտից՝ կտրել հողի երեսից 3—4 վերջոկ բարձր, որպէսզի այն տեղից նոր ոստեր դուրս գան, իսկ եթէ չըկարենք, այլ թողնենք, ծառի կանոնաւոր աճումը կարգելուի և երբէք չենք կարող նրանից պիտինացու տերեւ կամ պտուղ ստանալ:

Ծառի ստացած վիքրերը առաջանում են կեղենի վնասուելուց, ճղների կոտրատելուց և ճղների կամ բնափայտի մեղքուտուելուց: Եթէ վաղօրօք այդ վիքրերը ծածկենք սպեղանիով ու կեղեկ մակերեւոյթին հաւասարացնենք, շուտով վէրքը կարող է լաւանալ ու կեղեկ եղրերը աճելով կըդան—կըկպչեն իրար. իսկ եթէ, ուշադրութիւն չըդարձնենք ու բնափայտի մերկ մնացած տեղը ըսկուի փթել, այնտեղից փթախտը կանցնի բնի կամ ճղների ներքին մասերին ու այդպիսի վէրքից կակսի շարունակ դորշագոյն հիւթ հոսել, որից ծառը շատ է նուազում:

Սպեղանիով չծածկուած վիքրը հետզ կարող է ընդարձակուի ու թթւնուն փչացնել:

Բան է, եթէ վէրքը աննկատ է մնացել կամ որևէ է պատճառով սպեղանիով ծածկելը ուշացել է; որից նա իր չարագործութեան նշաններն է սկսել ցոյց տալ, ծառը չորանալուց փրկելու համար պէտք է վնասուած մասը լաւ մաքրել, կտրել—հանել փթած ու սկացած բնափայտը ու այդ խոսոչները լցնել սպեղանիով:

Շատ անգամ ծառատէրերը առ ոչինչ են համարում այսպիսի վէրքերից հասած վնասները, սակայն ստուգուած է, որ դրանից ծառերը աւելի են փչանում, քան թէ միս պատճառներից:

Սպեղանի: Թթենու վէրքերը և կտրուածքները ծածկելու համար կան մի քանի տեսակ սպեղանիներ. մենք ցոյց տանք այստեղ թէ լաւ փորձուածը և թէ գնի կողմից ձեռնտուները, որոնց կարելի է ամեն տեղ էլ պատրաստել.

1) Կովի թրիքը և լաւ կաւը հաւասար չափով խառնել իրար, լուծել բիչ ջրով ու այնքան հարել, որ դառնայ մածուցիկ զանգուած, հէնց դրանով էլ ծածկել ծառի վնասուած ու կտրած մասերը:

և 2)	Պակեղանին	հաշուենք	100	մաս.
	վերցնել	կովի թրիք	50	մաս.
		կիր կամ գաճ	20,9	մաս.
		փայտի մոխիր	29	մաս.
		դայլախաղի մանր աւագ	0,1	մաս.

ընդամենը 100 մաս.

արանց մի ամանի մէջ լցնելով իրար խառնել, ջրով լուծել, այսպան հարել որ գառնայ մի մածուցիկ զանգուած, կստանանք գործածութեան համար պատուական սպեղանի:

Թթենու հիւանդուքինները, որոնք քայլայում են նրանքներքին գործարանները, երկու տեսակ են. 1, խէժային հիւթի արտաթորութեան և 2) դեղնացաւ (քլորօց):

1) Խէժային հիւրի արտաքրումն առաջանում է ծառի միջի հիւթի կանոնաւոր լնթացքի խանգարումից, մանաւանդ երբ հիւթի առատ և ուժգին հասակի ժամանակսմիջոցում շերամի որդը կիրակիրելու տերելի համար կտրատում ենք ու նորաբողբջ կուկոնները կամ ոստերը. սրանից հիւթը մասամբ կանգ է առնում բըկոնները կամ ոստերը. սրանից հիւթը մասամբ կանգ է խէժանափայտի խոռոչների մէջ, թանձրանում ու առաջանում է խէժային հիւթ, որը իր կանգ առած տեղում շատ ժողովուելով ճաքացնում է բնափայտը և կեղեր ու ինքը դուրս է թափւում:

Մի քանի հետազոտողներ ինչպէս և պրօֆ. Կօմէսը, գտելնն մի առանձին մանրէ, որը մոնելով ծառահիթի օւլայի հատիկների մէջ, օւլան խէժի է վերափոխում:

Եթէ ծառերի վրայ երեայ այս հիւանդութիւնը, լաւ կլինի ժողովները պակասացնենք կամ դադարեցնենք, որ նրանից տերեւ ժողովելը պակասացնենք վէրքը սպեղանիով:

2) Խեղնացաւ (քլորօց) ծառի այն հիւանդութեանն են առանձինութեան տերենները ժամանակից տուած, զանազան պատճառներից, գեղնում են:

Այս ցաւը դեռ ևս լաւ չէ ուսումնասիրուած, իսկ որոնք շատ թէ քիչ հիւանդութեան նկատել են որ տերենները դեղնում են գըլի խաւորապէս ծառի տակի հույի անքերքիութիւնից—ուժասպառ լինելուց և նամանաւանդ ծառերը անջափ ջրելուց:

Դեղնում է նախ՝ ծառի կատարի տերենները և յետոյ, փոքր առ փոքր, դեղնացաւը անցնում է նրա ստորին մասերին: Պատճառում է, որ դեղնած տերենները մնում են ծառի վրայ մինչև մաշնան տերենաթափը, իսկ յաջորդ տարին ծառը կանաչում և տաշնան լիս է ասող և պիտանացու տերեւ:

Առասարակ այս ցաւը ծառի համար վտանգաւոր չէ։
Մանրեներից Փրանսիացի գիտնական Դ. Բօյիչ և Ֆ. Լամբեր
նկատել են *Bacillus Cubonianus* կամ *Bombycis* և *Streptococcus*
Bombycis նոյնպէս *Bacterium Mori* Lam. մակարոյծներ, որոնք
շատ մեծ վնասներ են պատճառում մատղաշ ծառերի դալար ու-
տերին։

Սրանց տուած վնասի արտաքին նշաններն են՝ զորշագոյն
սև բներ, որոնցով ծածկուած են լինում զալար ոստերը և տերե-
ների ցածի երեալը։ Ոստերի վրայ եղած բծերը լինում են զանա-
զան ձևերի և մեծութեան, ըստ մեծի մասին նրանք ձևաձև են
ու տարածուած ոստի երկայնութեամբը և զիխաւորապէս զամա-
ւորուած են լինում նրա մի կողմէ, թէև պատահում է, որ նրա
շուրջն էլ են պատում։ Վիրաւորուած տեղը երբեմն խոր է ընկ-
նում մինչև ոստի միջուկը։ Պատահում է որ մակարոյծերը յար-
ակւում են ոստերի դալար կատարների վրայն րանց բնափայտը
փոսացնում, սևացնում ու ծոռւմ են։

Տերեների և նրանց երակների վրայ նկատւում են նոյնպի-
սի փոսիկներ։ Տերեի վրայի բծերը պւելի մանր, բայց իրար շատ
մօտ են կամ թէ ի մի խմբուելով բռնում են տերեի վրայ զանա-
զան մեծութիւններով որոշ տարածութիւններ ու լինում են
սկզբում ժանգագոյն ու հատղահետէ սեանում են։

Մանրէները բնակուում են բոյսի հաստատուն հիւսուածքնե-
րում ու քայլայում են նրան, որից ոստը գորշ գոյն է ստանում,
երբեմն այսպիսի մանրէների խմբուած տեղի շուրջը գոյա-
նում է արեթի շրջանակ ու նրանով ծառի առողջ մասը զատ-
ւում է վարակուածից։

Մի քանի հետազոտողներ, ինչպէս և պրօֆ. Կոմէսո, ծառի
բնի հիւթի մէջ գտել է մի ուրիշ տեսակ մանրէ, նա մանելով
օսլայի գնդակի մէջ, նրան քարացնում է, որից թէ բնափայտը և
թէ կեղելը ճաքում են և հէց այնտեղից էլ դուրս է հսում ծա-
սին ուժասպառ անող խէժային հիւթ։ իսկ Վոլինօն նկարագը-
րում է մի ուրիշ մանրէ, որին անուանել է *Bacillus mori*, սու
սեագոյն փայլուն կէտ է։ Նա վնասում է զիխաւորապէս թթենու-
տերեները. այս մակարոյծով վնասուած տերեով եթէ կերակրենք
շերամի որդին, նա կը հիւանդանայ։

Մակարոյծ սունկերը լինում են շատ տեսակներով, աւելի
քան 320 տեսակ, որոնք յարձակուելով թթենուն վը-
րայ վնասում են նրան արմատները, բունը, ձղները, տերենե-

րը և պտուղները։ Մամնագէտ մանրէագէտ ֆօն-Տիւմէնը կազմել
է սրանց մասնաւոր ցանկը հետևեալ ձևով։

Սպիտակ բրենու համար՝

Գտուղներին վնասում են երկու տեսակ սնկեր՝

Aspergillus glaucus Lk.

Monilia fructigena Pers.

Տերեներին վնասում են 35 հատ զանազան տեսակ

սունկեր։

Ոստերին՝ 104 տեսակ։

Բնի վրայ լինում են 42 տեսակ։

Բնափայտի վրայ՝ 42 տեսակ։

Արմատների վրայ՝ 4 տեսակ։

Սպիտակ թթենու վրայ նկատուել են մինչև 229 տեսակ մա-
կարոյծ սունկեր։

Կարմրապտուղ բրենու

Տերեների վրայ՝ 4 տեսակ։

Ճղների » 17 »

Բնի » 1 »

Կեղելի » 2 »

Բնափայտի » 1 »

Ընդամենը 24 տեսակ։

Խառ-բուրի

Տերեի վրայ 4 տեսակ

Ճղների » 17 »

Բնի » 11 »

Բնափայտի 2 »


Ընդամենը 39 տեսակ։

Մամնագէտ Ա. Ն. Բէրէզէ-ն վերոյիշեալ մակարոյծ սունկե-
րի վրայ աւելացնում է այլ ևս 58 տեսակներ, որոնց ինքն է
նկատել։ *)

*) Այս մակարոյծ սունկերը հետազոտողներից յիշուած են լատի-
նական անուններով, որոնց աւելորդ համարեցինք միւսու մի յիշել. բաւակա-
նացանք նրանց թուերը միայն գնելուց Ման. Ն. Ա.
Նացանք նրանց թուերը միայն գնելուց

Ցիշուած բոլոր մակաբոյծ սունկերից նկարագրենք ամենաընդհանրածներից մի քանիսը, որոնք արժանի են առանձին ուշադրութեան:

Պուղիների վրայ յարձակում են բորբոսասունկերից երկուս՝ *Penicillium candidum*, (Նկ. № 18, 1) և և կ և *Aspergillus glaucus* գ. և գ.:



Նկ. № 18

Թթի պտուղը բորբոսասունկով վա-
րակուած:

Նրանցով կերակրել շերամի որդը, երրեմն էլ ժանգացաւը այնքան
խիստ է լինում, որ ծառերը զրկում են տերեներից:

Ժանգը նախ երեւմ է տերեների վրայ կլորաւուն գորշոգոյն
բծերով, բարակ գեղնաւուն եղրագծով. յետոյ փոքր առ փոքր այս
բծերը մնանալով բռնում են ամբողջ տերերը. իսկ եթէ բծերը մի
քանի հատ են միայն, տերերը կանաչ մնում: (Նկ. № 19)

Ժանգացաւը կարելի է բժշկել վազի միլդիու ցաւի դեղով:
Եթէ դեղնացաւը գարնան սկզբից սկսուի, տերեները հէնց
այն ժամանակից ծածկում են սունկի խիտ բծերով ու շերամի
կերի համար բոլորովին անպէտքանում են, պատահում է, որ վա-
րակուած տերեները թափում ու ծառը մերկ է մնում մինչեւ որ
նորն է դուրս դալիս:

Անդրկովկասի արևելեան մասում այս ցաւին անւանում են
զախրա. սրանից փշանում է թէ տերերը և թէ պտուղը:

Մասի բնի վրայ ապրում են մի շարք զանազան ձևի և մե-
ծութեան սունկեր, որոնց արմատները (սնկարանը) խրուած են

լինում բնափալտի կամ նրա վրայ գոյացած ճեղքերի մէջ,
ուր բնափայտը հետդ-հետէ տեղի տալով սունկին վերջինս մեծա-
ուր ու դէպի դուրս է ցցւում զանազան ձևերով և մեծութիւննե-
նում ու դէպի դուրս է ցցւում զանազան ձևերով և մեծութիւննե-
նում ու դէպի դուրս է ցցւում զանազան ձևերով և մեծութիւննե-
նում ու դէպի դուրս է ցցւում զանազան ձևերով և մեծութիւննե-
նում ու դէպի դուրս է ցցւում զանազան ձևերով և մեծութիւննե-
նում ու դէպի դուրս է ցցւում զանազան ձևերով և մեծութիւննե-
նում ու դէպի դուրս է ցցւում զանազան ձևերով և մեծութիւննե-




Նկ. № 19

Թթենու տերերը ժանգացաւով վարա-
րակուած:

ամսքը սկսում է անկանոն կատարել և մննունդի պակասութիւ-
նից, սունկից վեր եղած ծառի մասերի աճելութիւնը նուազում և
մինչև անզամ չորանում է:

Այսպիսի սունկերը (արեթ) առհասարակ երևում են ծառի
վրայ աշնան սկզբներից. սրանը սնուելով ծառի հիւթով՝ մեծա-
նում են: Խնչակս ամեն մի պտղատու ծառի, նոյնպէս էլ թըթե-
նում վրայ պէտք չէ թոյլ տալ որ արեթասունկը զարգանայ, պէտք
է ժամանակին կտրատել—թափել ու վէրքերը սպեղանիով ծած-
կել: (Նկ. № 20 և 21)

Արեթասունկերի շատ տեսակներն կան. սրանց մի մասը վը-
հասում է ծառի ճղներին, միւսը՝ ինին և կան որ արմատների
նասում է ծառի ճղներին,



Նկ. № 20

Ծառի բունը արեթա-
սունկով բռնուած:

Ների բնափայտի վրայ, երևում են փոքրատեսակ սունկերի խըմբեր՝ սև ու կարմիր գոյներով. սրանք երևում են առհասարակ մերկ ու կենսազուրկ բնափայտի վրայ: Կան սունկեր էլ, որոնցից ծառը թէն մի զգալիվը նաև չի կրում, բայց այնու ամենայնիւ ապագայ չարիքի առաջը առանելու համար նրանց պէտք է մաքրել ու սպառանիով ծածկել լվէրերը:



Արեթը մաքրելու և սպառանի քսելու հղուակեր

Վրայ էլ են յարձակւում. դրանցից Արևելեան կովկասում ամենատարածուած և վասատուն է Polyporus hispidus Fries սա ամենախոշոր արեթասունկն է, իսկ Schizoprophylax comatus Fries կոչուած արեթասունկը թէն աւելի փոքր տեսակիցն է, բայց նա բռնում է ծառի ամբողջ ճղները կամ բռնը և մինչև անգամ գլխարկասունկի հետ անցնում է նրա արմատների վրայ ու ծառին փթացնում է: (Նկ. № 22)

Աշնան դէմ, շատ անգամ ճըդ-

թնի ստորին մասում, արմատավզի շուրջը, երբեմն էլ թըթեանու ճղների վրայ, ուր որևէ պատճառից մի մասը սկսում է փթել, այն տեղերում շուտով երեսում են մութ կարմրագոյն փոքրիկ գլխարկասունկեր (Collybia velutipes) նրանք թէ և անվաս են ծառին, բայց նախազգուշացնում են, որ ծառի որոշ մասերը սկսում են փթել, պէտք է վաղօրոք առաջը առնել:

Սունկերից ծառին ամենից շատ վաս են հասցնում նրա արմատի վրայ յարձակուող սնկամակարոյժերը կամ միցելիաները, սա կոչւում է նաև փրացաւ կամ բորբոսացաւ: Մրանից ծառը, առանց արտաքսւստ երկացող պատճառի սկսում է ցամաքել, տերեները զեղնում, թառամում (չորսաւուն տեղերում աւելի արագ է լինում այս)՝ թափուում են ու ծառը չորանում. երբեմն այս ամենը դանդաղ է կատարւում բայց և պատահում է այնպէս, որ բուլովին առողջ երկացող ծառը մի օրւայ մէջ ցամաքում—չորանում է:

Մանրազնին հետազօտութիւնները ցոյց են տուել որ արմատունկերով:


Ների վրայ երբ երևում է սպիտակ բորբոս, ծառը այլևս չի կարողանում դիմանալ—չորանում է: (Նկ. № 23)

Այս ցաւով բռնուում են թէ և բարձրագիրք ջրարբի ծառերը, բայց գլխաւորապէս ցածրադիրք և աւելի խոնաւ ու շատ ջրուող տեղերի տնկիքը, ուր ամառուայ ամենատաք եղանակին անգամ արեի ճառագայթները չեն կարողանում գոլորշիացնել հողի ներաքին շերտերում ճացած ջրերը, որով ծառի արմատների փթելու ամենանպաստաւոր պատճառներ են առաջ գալիս, այն է՝ արալու մատների վրայ զարագանում են բորբոսասունկեր, որոնք սպիտակ



Նկ. № 22

ալիքածե բարակ թաղանթներով և հիւսուածներով բնակում են արմատի կեղեկի և ընափայտի արանքներում ու քայքայում են նըրայ պարուտակը կամ թերափայտը (կեղեկի տակի փափուկ շերտը զabolոնի. լարի) նրանք հետզ-հետէ կեղեկ բարձրացնելով



նկ. № 23

Բորբոսացաւով բռնուած արմատներ:

Նրա արանքներից գուրս են արձակում բարակ նրբաթելեր, ուրնք անցնում են դրացի կեղեններին և արմատներին ու այսպիսով շատ կարճ միջոցում վարակում են ամբողջ արմատները:

Մնկաբունի շուրջը արմատի կեղերց և բնափայտից սկըսում է արտաթորել խէժանման հիւթ: Մնկախումբը հողի երեսից 2-3 վերշոկ աւելի չի բարձրանում, ըստ մեծի մասին նամակում է հողի տակ:

Խոշորացոյցի տակ այս մնկաբուները երեսում են իբրև մի հիւսուածք բաղկացած անհամար մանրիկ թելերից:

Եթէ մնկաբունը ընկնի հինաւուրց մեծ ծառերի արմատների վրայ, նրանց մի զգալի վնաս չի կարող տալ, իսկ եթէ ծառը կառ ևս մատղաշ է և արմատների կազմը դեռ լաւ չի զարգացել—դեռ ևս մատղաշ է և արմատների կազմը դեռ լաւ չի զարգացել—ամբապնդուել, նա չի կարող դիմանալ նրանց յարձակմունքին ու արագապիս կը չորանայ՝ կարծես թէ նորա ստորերկրեայ մասը անտեսանելի կացիններով կտրատել են:

Բորբոսացաւը ևս առաւել վտանգաւոր է նրանով, որ նա

արմատների միջոցով հեշտութեամբ է անցնում դրացի ծառերին. բաւակառած արմատը շատ չնչին մասով շփուի առողջի արմատին. բացի դրանից այդ մնկի սաղմափոշները (ըօրու, *Ustilago Carbo*) օդի միջոցով կարող են տարուիլ շատ հեռուները:

Այս ցաւի դէմ թէ և կտրուկ և հիմնական միջոցներ չեն դառնուած, բայց կարելի է նրա առաջն առնելու համար մի բանի նախազգուշութիւններ գործադրել կամ թէ վարակուած ծառերը արմատախիլ անել, որպէսզի դրանցով առողջ մնացած ծառերն իւրա կենք կորուսախից:

Նախազգուշութիւննը կայանում է նրանում, որ պէտք է թըլթենու տակի հողը լաւ վլակել—պարարտացնել և ցածրադիրք տեղերը զգուշութեամբ ջրել. այն է՝ ծառերի տակը այնքան ջուր չըկապենք որ լճեր գոյանան, ի հակառակ դէպս բորբոսացաւը անխուսափելի կլինի:

Թթենիքը առնասարակ շատ ջուր չեն սիրում, իսկ երբ կարելի չըկելը, պէտք է գնացական ջուրը այնպէս բաց թողնել որ առուներում կանգ չառնի. իսկ ջրելուց յետոյ հողի երեսը փուխացնել, որպէսզի կարծրակեղեկ չկապի և մէկ էլ որ հողի վերանաշերը ճաքճքելուց արմատածերը չփասուին:

Ցաւի տարածման դէմ գործադրուած նախազգուշութիւնը երկու կերպ է լինելու 1) մակարոյծը ոչնչացնել և 2) բնաջինչ անել—ոչնչացնել վարակուած ծառը:

Սունկերը բնաջինչ անելու համար պէտք է հողը լաւ մշակել, չափաւոր ջրել և ծառը մաքուր պահել. իսկ վարակուած ծառը ոչնչացնելու համար պէտք է նրան զգուշութեամբ տեղիցը հանել այնպէս, որ արմատածերի մի փոքր կտորն անդամ հողի մէջ չըմիայ, հանած ծառը այրել, իսկ ծառատեղի փոսը թողնել բաց մինչև մէկ տարի, ումանք էլ խորհուրդ են տալիս՝ ծառը հանելուց անմիջապէս յետոյ փոսը լցնել կրաշփոթով:


Հիւանդութեան առաջը եթէ հէնց սկզբից առնենք, գուցէ հնար լինի ծառը փրկել կորուսախից. դրա համար պէտք է ծառի շուրջը Յ աշխն տրամագծով $\frac{3}{4}$ արշ. լայնքով ու $\frac{1}{2}$ արշ. խորութեամբ առու փորել, արմատների երեսի հողը հանել ու արմատները յարդով կամ խոտով ծածկել, որ արեից չմսասուին, յետոյ արմատները մի առ մի զիտելու է, եթէ կան բորբոսացաւով վարակուածներ, պէտք է կտրել—մաքրել. մի բանի օրից յետոյ կարելի է արմատները ծածկել ուրիշ հողով. եթէ սրանով ծառը չըքշկուի, պէտք է նրան արմատախիլ անել:

Բորբոսացաւը թթենիներից կարող է անցնել ուրիշ պտղա-

տու ծառերին էլ կամ ընդհակառակը՝ վերջիններից-թթենիներին։
Փրումն առաջացնող սունկերից գլխաւորները երկու տեսակ-ներ են։

Հասարակ զլխասունկ (Օպեռօք, Agaricus կամ Armillaria mellea). Նա ունի երկայն (2—5 մետր) և բաւական հաստ թելեր (րիզոմօրֆեր), որոնք անցնում են ծառի ստորերկրեայ արմատների կեղևի տակ, երբեմն էլ նոյն կեղևի տակովը բարձրանում են ծառնի վեր մինչև մի սաժէն։ Այս րիզոմօրֆերը (Rhizomorpha fragilis var. subterranea) արտաքուստ մութ գորշագոյն—համարեա թէ սև է, յղկուն, դէմատօֆորների նման չունին տանձանման ուռոյցքներ, Ռիզոմօրֆները կեղևի վերնաշերտի տակ մտնելով նրան ուռեցնում ու ճաքացնում են երբեմն կեղևի երեսն են բարձրանում, երբեմն նրա տակն են մասնում ու թելերը (հիւսուածքը) տարածում են արմատների կեղևի տակի ամեն կողմերը ու քայլքայում են նրան։

Սաղմափոշիակիր սունկերը երկում են սեպտեմբերին կամ հոկտեմբերին՝ կոճկերի, փթած կամ հիւանդ ծառերի արմատների շուրջը և երբեմն էլ նրանք հողից բաւական բարձր են դուրս գալիս, Խոնաւ, բայց տաք աշնանը նրանք աւելի առատ են լինում, քան թէ երաշտ եղանակին։ Պատահում է որ նրանց խումբերը բռնում են բնի շուրջը։ (Նկ. № 24)



Նկ. № 24
Գլխարկասունկը ծառի բնուվլի շուրջը
պատճեաւ։

Գլխարկասունկան բունը սպիտակ է, իսկ միցելիս մաս-սը՝ բաց զեղնա-գորշագոյն ու ծածկուած է մանր թեփուկներով։ (Նկ. № 25)



Նկ. № 25
Գլխարկասունկը եր արմա-ծալերով։

Արմատները վնասող մակարոյժ սունկերի շարքումն է Դէմատօֆորա նէքատրիքս (Dematophora necatrix)։ Կոչուողը սա թելանման է՝ սպիտակ դոյնով (միցելիս միցելիա)։ Այս թելակոյտը սարդի ոստայնի նման է և ծածկուած է ծառի ամբողջ արմատը։ Արա վերին շերտը երբեմն մոխ-րագոյն է դառնում և հետղ-հետէ մութ-գորշագոյնի է փոխում։ Երբեմն զորշագոյն և սպիտակ միցելիաները իրար խառնուած են լինում։

Սպիտակ միցելիան բաղկացած է գրեթէ թափանցիկ դեղ-նաւուն թելերից։ Նրանցից մի քանիսը լայնանալով, ծայրերը կամ միջաբաժանմունքները ուռում, տանձանման ձև են ստանում։ (Նկ. № 27)

Թիսագոյն միցելիան առաջանում է սպիտակից, նա լինում է

Գլխարկի ստորին կողմը գտըն-ւում են սաղմնակիր թերթիկները (Спороносные пластинки կаим ги-меній) որոնց վրայ զարգանում են սաղմնափոշիները. սրանցով է որ նախ գոյանում են միցելիս կոչուող սնկաթելերը (мицелій) և յիսոյ նրանից էլ դուրս են գալիս սուն-կերը. ուրեմն սունկը առաջանում է մէկ՝ րիզոմօրֆի մէկ էլ՝ սաղմնա-փոշու միջոցներով։

Գլխարկասունկը առհասարակ ծառերի համար շատ վնասաբեր է. պէտք է զգոյշ լինել, միշտ կը ը-ւել նրանց գէմ, այնէ՝ միշտ կը տրամաել ու փշացնել նրանց բները, հողը լաւ մշակել, չափաւոր ջը-րել ու տնկարանները ժանգալ խոտերից աղատ պահել։ (Նկ. № 26)


Գլխարկասունկը ուտելու հա-մար լաւ և համեղ է։ (Նկ. № 26)

Արմատները վնասող մակարոյժ սունկերի շարքումն է Դէմատօֆորա նէքատրիքս (Dematophora necatrix)։ Կոչուողը սպիտակ դոյնով (միցելիս միցելիա)։ Այս թելակոյտը սարդի ոստայնի նման է և ծածկուած է ծառի ամբողջ արմատը։ Արա վերին շերտը երբեմն մոխ-րագոյն է դառնում և հետղ-հետէ մութ-գորշագոյնի է փոխում։ Երբեմն զորշագոյն և սպիտակ միցելիաները իրար խառնուած են լինում։

Սպիտակ միցելիան բաղկացած է գրեթէ թափանցիկ դեղ-նաւուն թելերից։ Նրանցից մի քանիսը լայնանալով, ծայրերը կամ միջաբաժանմունքները ուռում, տանձանման ձև են ստանում։ (Նկ. № 27)


Թիսագոյն միցելիան առաջանում է սպիտակից, նա լինում է

աւելի երկայն, հասու և գլանաձև, ուսուցքները աւելի խոշոր և զգալի տանձաձև խուլեր են կաղմում:



Նկ. № 26
Ուտելու սունկեր՝ միջից կտրուած և իր արմատաթելերը:

Միցելիայից առաջացած սնկաթելերը շատ տեսակներով են լինում, նրանք ամենքն էլ պատում են ծառի վնասուած տեղերը



Նկ. № 27
ա) Սպիտակ միցելիա, բ) տանձանման միցելիա: (Շատ մեծացրած):

դրսից, լինեն նրանք հողի տակ կամ հողի երեսին:
Արտաքին միցելիայի նրբաթելերը ճիւղաւորուելով երբ մըտ-

նում են կեղեի տակ, ասում են ներբնա—միցելիա, սրանք ուր որ մտնեն, այնտեղի կենդանի հիւսուածքը, լինի նաև կեղեի տակ, ընափայտի և միջուկի մէջ, բուրին էլ կը քայքայեն, չնորհիւ իւրենցից արձակած անթիւ թելերի:

Դէմատօֆօրա սնկամակաբոյծը բաւական դիմացկոտ է. կարող է դիմանալ թէ շատ տաքին և թէ շատ ցրտին: Նա զլիւսորապէս զարգանում է ջուրը լճացած, հողը փթած օրգանական մարմիններով առատ և կաւային տեղերում. իսկ աւազախառն տեղերում և աւազուում նա չի կարող զարգանալ:

Միցելիան, բիզոմօրֆիան և զանազան տեսակների սաղմնափոշին եթէ զարգանան, կարող են շատ կարճ ժամանակում աւելի ընդարձակ տարածութեամբ տնկարաններ:

Մալ'ուններ:

(Մօխ, Musci frondosi)

Սրանք առասարակ երեւում են խոնաւ տեղերում առած ծառերի բների և ոստերի հիւսիսային կողմերի վրայ, բայց երբեմն էլ շրջապատում են նբան ամեն կողմերից:

Սովորաբար պարտիզանները ծառը պատող մամուռները առ ոչինչ են համարում, բայց եթէ ուշի ուշով դիտենք, կարող ենք պարզապէս տեսնել, որ մամուռները հետզ հետէ ծառի կեղեւ մաշում—քայքայում են. պէտք է վաղօրօք նրանց մաքրել—հեռացնել, որը մի դժուար բան չէ:

Քոսարոյսեր:

(Լիտա, Ustnea, Imbricaria և ուրիշներ:)

Քոսախոտ բոյսերը սովորական մամուռներից աւելի վատանգաւոր են ու դժուար է նրանց մաքրել—հեռացնելը, որովհետեւ նրանք երբեմն բոնում են ծառի ճղների վերի կատարները:


Բաղնդ:

(Պլայտ. Hedera Helix)

Բաղեղային մակարոյծիրը թթենիների համար շատ վտանգաւոր են, որովհետև նրանք, իրենց անթիւ արմատիկներով ծըծելով թթենու կեղերի հիւթը, նրան չորացնում են:

Ճագոմ կամ ճուշ

Վերջապէս թթենին ենթարկւում է սպիտակ ճագոմ—ճուղ (Օմելա, *Viscum album*) մակարոյծին: Եթէ լաւ խնամուի, ծառը կարող է միշտ ազատ մնալ այս մակարոյծի յարձակումից, այնու ամենայնիւ զգոյշ պէտք է մնալ. հէնց նա երեաց, իսկոյն պէտք է մարբել—հեռացնել. դրա համար պէտք է կտրել այն ճղները, որոնց վրայ ճուշ է երեացել. ապա թէ ոչ ապարդիւն կլինի եթէ միայն մակարոյծը կտրենք—թափենք, ոռովհետև նրան հեռացնելուց յետոյ այնու ամենայնիւ նրա արմատները, որ շատ խոր են մտած լինում ծառի կեղեների տակ, կարող են նորից ծլել: (Նկ. № 28)



Նկ. № 28

Ճագոմ՝ ծառի վրայ բուսնող մակարոյծ:

Գ

Թ Թ Ե Կ Ո Ւ Վ Ն Ա Ս Ո Ւ Կ Կ Ե Ն Գ Ը Ն Ո Ւ Բ Լ Ե Կ
Մ Ի Զ Ա Տ Ն Ե Բ Լ :

Կենդանիներից թթենում վնասում են լորձիւնաւորները (լիխունչները), մի քանի միջատներ և կաթնակերներ:

1) Յաճախ թթենիների վրայ կարելի է տեսնել մի քանի տեսակ լորձիւնարոր խխունջներ. սրանց մի տեսակը (*Helix vermiculata* և *H. variabilis*) շատ է լինում Բագուայ նահ. Լենքորանի գաւառում. այստեղի թթենիների վրայ սրանք յարձակում են մեծ քանակութեամբ, ուտում են նրանց տերեները կամ թէ ապականում են ծառը իրենց սոսինձանման լորձիւնով. իսկ *Helix Krinickii* խխունջը մեծ քանակութեամբ բռնած է Սև ծովի արևմեան ափերը և աւերում է այնտեղի թթենիները:



Նկ. № 29

Կարծրաթիւ բզեզ, նրա որդը և հարսնուկը:

2) Միջատներից վնասատու են թթենիներին կարծրաթեների, մարմարակեղեղ որդի (*Polyphylla fullo*), (Նկ. № 29) թաղանթաթեների, ուղղաթեների և կիսուկարծրաթեների մի քանի տեսակները:

Կարծրապատեան խաղողառդ. (*Coccus կամ Рыжинaria vitis*). սա թէ և յատուկ է վաղերի համար բայց ասպրում է նոյնպէս թթենու բարակ ոստերի տերեների վրայ էլ. նրա ոսպաչտի թիսագոյն պատեանը շուռ տըւած է դէպի ոստը, ու դը-

տակը ապրում է որդի էպը, որը գարնան սկզբներին ածում է իք փոշիանման ձուերը: (Նկ. № 30)



Նկ. № 30

Պատեհաւոր խաղողաբույ

Սրանից ծառը ազատելու համար պէտք է ծխախոտը և փել, նրա մզուկից վերցնել երկու փունստ, $1\frac{1}{4}$ ֆ. կալիի սապոն ու խառնել 10 ֆ. ջրի հետ, դրանով լաւ սրսկել վարակուած ծառերը մի քանի անգամ շարունակ. սրանով ոչ միայն միջատները կը ոչնչանան, այլ և տերեների վրայի սև սնկային փոշին էլ կանցնի:

Ուղղաբեկի կարգութիւն են մարախի մի տեսակը, որ դաշտի խոտերը ուտելուց յետոյ սկսում է թթենու տերեներն ուտել. իսկ մի ուրիշ միջատ, որը գաւառական անունով ասւում է իշխառանջ կամ զետնի լակու (մեծենա. *Gryllotalpa vulgaris* Latr) ստորերկեայ միջատը, որ ազանաբար կրծում է մատղաշ թթենու արմատները: (Նկ. № 31)

Սրանց աշխատում են ոչնչացնել մկնդեղով շաղախած եղիատացութենի հատիկներ ձգելով բներում կամ թէ ուրիշ շատ միջոցներ գործադրելով, այսուամենայնիւ չեն կարողանում սրանց առաջը վերջնականապէս առնել:



Նկ. № 31

Իշխ-խառանջ

Կան մի տեսակ թաղանթաթէն ուտիչ միջատներ (Xylocopa violacea), որոնք հասակաւոր ծառերի բնի մէջ մտնում, նրան կրծոտելով անցնում են աջ ու ձախ, ցած ու բարձր ու իրենց գոյացրած անթիւ անցըերով վիշացնում են բնափայտը:

Կան մի խումբ կիսակարծրաթէն որդերի էլ որոնք նոյնպէս շատ մասաբեր են ինչպէս թթենիներին, նոյնպէս էլ միւս կուլտուրական բոյսերին: Սա կոչում է 'Իմասպիս պենտագոն' (Diaspis pentagona)


Սրանց որդը կրծոտում է մինչեւ անդամ հաստաւուն արմատները ու ծառը չորացնում:

Սրանք արագ աճելով ահազին խմբերով յարձակում են բոյսերի և 2—4 տարեկան թթենու մատղաշ ոստերի վրայ ու փչացնում են նրան: (Նկ. № 32)

Սյու միջատը Եւրոպայում առաջին անդամ 1885 թուին է երկացել. որա հայրենիքը Եավոնիան է. այստեղից, ճանապարհորդների միջոցով անցել է Եւրոպայ և մեզ մօտ:

Սրա դէմ կոռուելու միակ միջոցը առայժմ համարւում է ծառի ոստերը շատ շուտ շուտ կտրատելը և ճղներին քսել նրանց ոչնչացնող հակամիջատային հեղուկ (ինսեկտիսիդ, insecticide): Ծառերի վերնամասերը յաճախակի կտրելու դէպքում շըպիտի մուանանք նրանց տակի հողը լաւ մշակել ու փորել, որ ծառը չդրկուի մնընդանիւթից:

Դիմապիսի ցաւը շատ է տարածուած հարաւա-արևմտեան Եւրոպայում. նրանով վնասում են նաև պաղատու ծառերը, թթվերը և բանջարաբոյսերը,



нк. № 32

Դիմասպիս մակարոյծը շատ մեծացրած: 1. ծառի սուտը ծածկուտք զիտապիսի բներով. 2. էպ մակարոյծը. 3. հասակաւոր որձ մակարոյծը. 4. արու մակարոյծի հարսնութը. էզը կոյր է ու մշատկեր, որձը ունի 4 աչք և 6 ոտներ, չունի բերան, սնունդը ծառի կեղաներից ծծում է իր երկու բեկերով:

Այս գեղը լինելու է թարմ, օրուայ շինածը նոյն օրը բանեցնելու է, եթէ մնայ, զօրութիւնը կը կորչի:

Այս միջատը ունի մի ահարկու թշնամի—հսկայ ճանձ (taxon, Prospalta Berlese et How), որ կրէտի մի տեսակն է. պրօֆ. Ա. Բէրեկէ Ամերիկայից հատկիա բերեց այս միջատը ու այնտեղից տարածեցին Եւրոպայի այն կողմերը, ուր դիմասպիսը գոյութիւն ունի. այս կրէտը անխնայ ջարդում է նրանց ու հէնց նրանցով էլ սնուում է:

Բզզկուքիննը, եթէ դիմասպիսը վարակւած են միքանի ծառեր միայն, պէտք է նրանց կտրել հողի բերանից ու այրել. իսկ եթէ ցաւը ընդհանուր կերպարանք է ստացել, պէտք է ձեռք առնել լուրջ միջոցներ. այն է՝ ձմեռը ծառի վարակուած մասերը կտրատել ու անմիջապէս այրել. իսկ ծառի մնացեալ մասը դրսից, երկաթաթել խողանակով, լաւ մաքրել որդերը, նրանց բները, ձուերը ու թափել գետին, ուր ձմեռուայ ցրտից անոտ էդ միջատները կը կոտորուեն. բայց բանի որ կարող են այդ մակարոյծերը մտնել կեղերի և բնի ձեղերի մէջ, ուր ոչ մի խողանակով հնար չի լինի գուրս հանել, դրա համար էլ ամբողջ ծառին քսելու է հետեւեալ գեղը. 22 փունտ ծանր զաթրան, 10 ֆ. չոր սողա և 100 լիտը ջուր. նախ սողան լուծել ջրի մէջ, յետոյ վրան լցնել զաթրանը ու լաւ հարել. եթէ հարելուց յետոյ հանգիստ թողնենք, մասերը գրեթէ կը զատուի ծառի ծառին քսելու է թարմ, օրուայ շինածը նոյն օրը բանեցնելու է, եթէ մնայ, զօրութիւնը կը կորչի:

Այս գեղը լինելու է թարմ, օրուայ շինածը նոյն օրը բանեցնելու է, եթէ մնայ, զօրութիւնը կը կորչի:

Այս միջատը ունի մի ահարկու թշնամի—հսկայ ճանձ (taxon, Prospalta Berlese et How), որ կրէտի մի տեսակն է. պրօֆ. Ա. Բէրեկէ Ամերիկայից հատկիա բերեց այս միջատը ու այնտեղից տարածեցին Եւրոպայի այն կողմերը, ուր դիմասպիսը գոյութիւն ունի. այս կրէտը անխնայ ջարդում է նրանց ու հէնց նրանցով էլ սնուում է:

Թթենու լուիծները:

Յիշենք երկու մակարոյծեր, որոնք թէ և թըլիենու վրայ էլ են գտնուում, բայց նրանք յատուկ են պտղատու ծառերին. օրինակ՝ զեղձի լուիծ (Leucania symbiforme) երկուու էնակ սալորի և վաղերի վրայ. իսկ վազի լուիծը (Coccus Pulinivaria vitis) ըստ մեծի մասին լինում է վաղերի վրայ, ինչպէս վերը յիշեցինք և զբինք վերջնին նկարը (№ 30):

Սրսոնցով վարակուած ոստերի վրայ յաճախ երեսում է սնկաթել միցելիան էլ՝ ու թաղանթի ձևով: Աւստրիայում սրան անւանում են «առուսական ցող»:

Վազի լուիծը կպած է լինում ծառի մատղաշ ոստերին, ծածկուած է նա կարծրամաշկ վահանով. մակարոյծը նրա տակը ապաստանած մնուում է ոստի մատղաշ կեղերի հիւթով ու գարնան սկզբին էզը ածում է իր ձուերը,

Միցելիան այս մակարոյծերից արտաթորած մեղրանման հիւթին խառնուելով զարնան անձրեներից ողողւում—անցնուում է ծառի կանաչ տերեներին ու նրանց կանոնաւոր աճելը արգելում:

Բջջկուրիննը, Այս երկու տեսակ լուիծներին ոչնչացնելու համար պէտք է գործածել այն գեղը ինչ որ ասուեց դիմասպիսի համար. իսկ եթէ ուղմանք անմիջապէս ամառ բժշկել գրա համար յատկապէս պատրաստելու է հետեւեալ հեղուուկը. 14 ֆ. ծխախոտի մզուկ (էկստրատ), 1 $\frac{1}{4}$ ֆ. կալիի սապոն և 10 ֆ. ջուր. սրանք լաւ խառնել ու սիֆօնիով կամ աւելով՝ առատապէս սրսկել վարակուած ծառերը մի քանի օր շարունակ, սրանով կը զնչանան ոչ միայն լուիծները, այլ և տերենի վրայ եղած միցելիայի բոլոր սնկաթելերը կը մաքրուին—կանյայտանան: (նկ. № 33)

Ցածրադիրք ծառերը հեղուկ քսելու համար աւելի յարմար են:

Կարսակերներից թթենուն շատ վնասում են կրծողները.

ա) Մկները, որոնք շատ միծ քանակութեամբ ոչնչացնուում են թթենու սերմերը:

բ) Երկարափուղ ողնիքը, որոնք լենքորանի դաւառում յարձակուելով թթենու մատղաշ տունկերի վրայ, երեմն բոլորովին նրանց կրծում—ոչնչացնում են:

գ) Նապաստակները գլխաւորապէս ձմեռները յարձակուելով մատղաշ թթենիների վրայ, կրծում են նրանց կեղեները, որից ծառը միշտ պակասաւոր է մնում. տնկարանատէրը անփոյթ պիտի չմնայ, միջոցներ է գտնելու դրանց հալածելու:



Սիֆոնիա, սրոկեռու գործիք:

դ) Դաշտամկները իրենց ձմեռնային արշաւանքների ժամանակ շատ անգամ է պատահում, որ ինչպէս միւս պտղատու ծա-



№ 34

Դաշտամկներ:

ոերի, նոյնպէս էլ թթենիների տնկարաններում են կանգ առնում, այստեղ շինելով զետնափոր բներ, կրծում—փշացնում են մատղաշ բոյսերի արմանները. սրանց ատամներին ըստ մեծի մասին զո՞ն են գնում թթենիքը և գլեղիչին:

Դաշտամկներից ազատուելու համար լաւ է գործադրել վերջերումս զրա դէմ գտած միջոցները, քան թէ համարելով զրաներկնառաք մի պատիժ, միայն ականատես մնալ թէ ինչպէս են աւերտում դառն ըրտինքով մեծացրած տնկիքը:

ե) Վնասատու է ծառերի արմաններին նաև խլուրլը:

զ) Ոչ պակաս վնաս են բերում, ինչպէս մատղաշ պտղատու ծառերին, նոյնպէս էլ թթենիներին՝ տնայլին անասունները, մանաւանդ ոչխարները և այծերը, որոնք անխնայաբար կրծուում են նրանց թէ տերենները և թէ դալար ոստերը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Բ.
ՏԵՂԵԿԱՏՈՒ

Գրականութիւն

Անսուտին, «Рук-во раз. Шелков. 1898. Гомилевскій». Ту тов. дер. 1894. Н. Шавровъ, „Шелковица ея разр. и польз. ею 1899.

Du Breuil. L'olivier et le murier. 1875. Robinet «De la culture du mûrier.—Seringe, «Description, culture et la taille des muriers. Coutagne, Le nouveau parasite du murier. (Diaspis pentagona). Passerini, Allevamento del bacheie cultivazione del gelso. Frentini, Il gelso 1900. Tamaro. Gelsi cultura 1894. և ուրիշ շատերը»

ՏՆԿԱՐԱՆՆԵՐ ԵԻ ՍԵՐՄԱՎԱՃԱՌՆԵՐ.

Թթենիք, կամ նրա սերմը գնել ցարկացողները կարող են դիմել կովկասում՝ «Գիւղատնտես»-ի խմբ. Տիֆլիս, Ռедакція «Գյօհա-տնտես» (անկիք և սերմ):

Гори. Садоводство Е. Ф. Африкяна (անկիք):

Ст. Скара. З. Ж. д. бр. Авсаркисовых (անկիք):

Тифлисъ. Е. М. Придоновъ (անկիք, բուժիչ դեղեր և սրսկիչ գործիքներ):

Тифлисъ. Кавк. Шелков. станція, (անկիք և սերմ):

Тифлисъ, складъ сѣмянъ Ларше. Михаил. пр. № 10 (սերմ):

Դպրոցներ

Թթենու տեսական և գործնական մշակութիւնը կարելի է սովորել կովկասում՝ Թիֆլիսի Շերմապահական կայարանին կից դասընթացքներում (ապրիլ ամսից մինչև օգոստոս), իսկ Ռուսաստանում՝ Խարկովի և Ռոմանի գիւղատնտեսական ուսումնարաններում:

Թթենիների ժողովածու
(Հերբարիում)

1) Թիֆլիսում, Կովկ. Շերմամ. կայարանում կալ թթենիների լուլոր տեսակների կատարեալ ժողովածու:

2) Պետերբուրգի բուսաբ. թանգարանը ունի նոյնպի սի ժողովածու:

3) Պետերբ. Պետական կալուածոց վարչութեան թանգարանում կայ Եապոնիայի և Զինաստանի թթենիների մի շատ հետաքրքիր և հարուստ հերբարիում:





Վ. Մ. ՂԱԶԱՆՁԵԱՆԻ

Նոր բաց արած

Օրինակելի այգեգործական եւ բանջարաբուծական հաստատութիւն, որը հէնց իր հիմնարկութեան առաջին տարին, 1911-թ. Թիֆլիսում կայացած պաղաքուծական ցուցահանդիսին, վարձատրուեցաւ ՈՍԿԵ ՄԵԴԱԼՈՎ.

Հիմնարկութեան մէջ ընդունւում են այգեգործութիւն, բանջարաբուծութիւն նոյնպէս և ջերմանոցներում բոյսեր մշակելու համար՝ սովորողներ—պրակտիկանտներ:

Փետրւար ամսից կարելի է այն տեղից ստանալ ամեն տեսակ բանջարների սածիլներ, մանաւանդ վաղահաս տեսակների և ծաղիկների, նոյնպէս և զարդարաստի հող՝ սենեակի ծաղիկների համար:

Հիմնարկութիւնը մասնագիտութեան վերաբերեալ հարցերին և խորհուրդներին միշտ տալիս է սիրայօժար բաւարարութիւն:

Հասցէն՝ Տաֆլաչ, Սадовое заведение В. М. Казанджяна
Воронцов. յլ. № 120.


ՑԱՆԿ

Նախարան

Ա.

	ԿՐԵԱ
Ընդհանուր տեսութիւն	2
Թթենու տերենները	»
Թաթատերեւ թթենիք	4
Ծագումը և տարածուիլը	5
Մշակութիւնը	5
Երկարակեցութիւնը	6
Արտաքին կեանքը	7
Ծաղկելը և պաղակալելը	8
Ներքին կեանքը	»
Ծառի հիւթի հոսանքը	9
Թթենու տեսակները	12
Բազմացնելը	13
Սերմ հանելը	»
Յանելու և տնկիթը խնամելու եղանակները	15
Հատւածառատով և տնդալիսով բազմաց. եղանակները	16
Հողի պարարտացնելը	»
Ոռոգելը	17
Պատուաստելը և նրա տեսակները	21
Առաջին տարուայ արած պատուաստի խնամքը	22
Թարմ տերենի բաղադրիչ մասերը	»
Զանազան յատկութիւնները	33
Շերամի կեր թթենի	24
Տնկարանները	27
Խոնաւ տեղում տնկարան ունենալու կերպը	28
Պաղի համար տնկարան	»
Յածրագիրք տնկարան	»
Կանաչ ցանկապատ	»

Հին ծառի վերանորոգումն	29
Զեւսոր կամ գեղատեսիլ տնկիք	30
Շահագործումն	32
Պտղի շահաւէտութիւնը	33
Թարմ թթի հիւթի բաղադրեալ մասերը	»
Թթի պտղի շաքարի քանակը	»
Թթից ոգելից խմիչքներ	34
» » թացախ	35
» թաղցրաւենի, բէքմեզ և պաստեզ	»
Բուժիչ յատկութիւնները	»
Չորացրած թութ	36
Թթենու փայտը	»
» թէլ	37
Վերջաբան	38
R	
Թթենու հիւանդութիւնները, մակաբոյծերը եւ վիասատուները	39
Դ.	
Թթենու վնասատու կինդանիները ու միջատները	55
Դ.	
Տեղեկատու	62
Ցանկ	65



Կ. Թ. Աֆրիկանի

Այգերուծական տնտեսութիւնը, որ Գիւղատնտեսական և Արդիւնաբերական ցուցահանդէսներում—Կովկասում և Ռուսաստանում պարզեատրւել է 15 ՀԱՏ ՈՍԿԵԱՅ, ԱՐԾԱԹԵԱՅ եւ ԲՐՈՆԶԵԱՅ ՄԵԴԱԼ-ՆԵՐՈՎ:

Առաջարկում է նաև 1 և 2 տարեկան պատուաստուած արտասահմանեան և տեղական ամենալնտիր տեսակի պաղատուծաների տնկիք, նոյնպէս և թըղուկ (կարճահասակ) խնձորենիք ու տանձենիք:

Ծառելի ընդամակ ցուցակը
ուղարկուում է ձրիւ
Դիմել՝ Գօրի Կ. Թ. Աֆրիկանին.

Гори, Садоводство К. Т. Африкяна
կամ Тифлисъ, Редакция „Гюхатнитесъ“



«ԳԻՒՂԱԾՆՏԵՍ»-ի խմբագրատանը ծախուռմ են գիւղաւ տեսական ըովանդակութեամբ հայերէն լեզով հետեւալ զրքեցն

	Գիւն	
1) Անջուր հողերի ոռոգումն. Գ. Մուրագեանի . . .	10	
2) Բամբակը և նրա մշակութիւնը. Ա. Աթանասեանի ...	40	
3) Բանջարաբուծութեան ձեռնարկ (կազմ. Ն. Սիմէօնեանց) 60		
4) Գիւնեգործութիւն Կ. Մելիք-Շահնազարեանցի... 1 ր		
5) Թոչնապահութիւն (կազմ. Ն. Սիմէօնեանց) . . .	25	
6) Խաղողի հիւանդութիւնները և բժշկութիւնը. Ա. Բաշին-		
»	ջաղեան . . . *	5
7) Խոտարուծութիւն (կազմ. Ն. Սիմէօնեանց)	20	
8) Կաթնամնութութեան ձեռնարկ՝ Կլէյնի	50	
9) Կօնսերվանը՝ Ա. Զելինսկի	40	
10) Հողի պարարտացումն Ա. Աթանասեանց	15	
11) Մեզուաբուծութեան ձեռնարկ. Ա. Բարխուղարեանի.	25	
12) » » Պօտեխինի	75	
13) Ներկատու բոյսեր. Աւ. Սարուխանեանի . . .	25	
14) Պտղատու ծառերի թշնամինները	35	
» » »	կազմածը	45
15) Պոձեմъ воды, А. Е. Ханъ-Аговъ	70	
16) Տեղեկատու (գիւղատնտեսական) 1911 թւի . . .	30	
17) Տնայնագործական համագումարը	70	
18) Վաղի մշակութիւնը. Կ. Մելիք-Շահնազարեանի . . .	1 ր	
19) Քէփիր պարաստելու ձեռնարկ. Աւ. Սարուխանեանի 15 կան նաև բժ. Բուղուղիանի հանրամատչելի հրատարակութիւնները.		

Դիմել Տիֆլիս, Ռեդակցիա „Գյոհանտես“.

634.11.
11-50